

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՑԻԱՅՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

7.1 ՀՈԴՎԱԾ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՐԳԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են ավելի իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի Բաժին I-ում:

Կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է պայմանավորվող կողմերի առաջնային պարտականությունը՝ երաշխավորելու, որ իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք օժտված լինի Կոնվենցիայի Բաժին I-ով սահմանված իրավունքներով ու ազատություններով, մասնավորապես այն իրավունքներով (և այդ իրավունքների սահմանափակումները), որոնք սահմանված են 2-18-րդ հոդվածներով: Հետևաբար, պայմանավորվող կողմից պահանջվում է պահպանել այդ Հոդվածների պահանջները, անկախ մարդկանց ազգությունից, բնակության վայրից¹ կամ ցանկացած այլ առանձնահատկությունից: Միակ պայմանն իրավագործության առկայությունն է: Հոդված 1-ը տարբերակում չի մտցնում խնդրո առարկա միջոցի կամ կանոնի տեսակի միջև և պետության իրավագործության դրսևորման որևէ ձև չի հանում Կոնվենցիայի ազդեցության շրջանակից:² Յուրաքանչյուր պայմանավորվող պետության «իրավագործության» տակ հիմնականում նկատի է ունեցվում «տարածքային իրավագործությունը»:³ Այնուամենայնիվ, բացառիկ դեպքերում, Կոնվենցիայի անդամ պետությունների գործողությունները, «որոնք իրականացվել են կամ ազդեցություն են թողել իրենց տարածքից դուրս», Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով կարող են նրանց կողմից իրավագործության իրականացում հանդիսանալ:⁴ Ավելին, իրավագործության կոնցեպցիան, ի լրումն աշխարհագրական տարածքի, ներառում է պետության փաստացի իշխանության կամ պատասխանատվության ներքո գտնվող բոլոր անձանց կամ գույքը: Նման դեպքերի թվին են դասվում այն իրավիճակները, երբ զինված ուժերը կամ այլ պետական պաշտոնյաները գործում են տվյալ պետության սահմաններից դուրս⁵, կամ երբ պետական պաշտոնյան գործում է առանց համապատասխան իրավասության:⁶ *Լուիզիդոն ընդդեմ Թուրքիայի*⁷ (*Loizidou v Turkey*) գործում կիրառվել է «պետական տարածքից դուրս այլ տարածքի նկատմամբ արդյունավետ վերահսկողության» թեստը: *Բանկովիչի* գործում Մեծ Պալատը այս կապակցությամբ հետագա պարզաբանումներ մտցրեց, սահմանելով, որ էքստրա-տարածքային իրավագործությունը կճանաչվի այն դեպքում, երբ պետությունը «ռազմական օկուպացիայի, կամ տվյալ տարածքի Կառավարության կողմից տված համաձայնության, իրավերի կամ լուռ համաձայնության արդյունքում համապատասխան տարածքների և դրանց բնակչության (ովքեր այդ տարածքներից դուրս են գտնվում) արդյունավետ վերահսկողության միջոցով իրականացնում է տվյալ Կառավարության կողմից, որպես կանոն, իրականացվող բոլոր լիազորությունները կամ դրանց մի մասը»⁸: Այլ օրինակների թվին են դասվում պետության տարածքից դուրս դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ծառայողների

¹ Տ'ես, օրինակ, *Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (D v UK)* գործը, թիվ 30240/96, 2.5.97, (1997) 24 EHRH 423: *Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի գործը (Amuur v France)* գործը, թիվ 19776/92, 25.6.96, (1996) 22 EHRH 533:
² *Թուրքիայի միացյալ կոմունիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի (United Communist Party of Turkey v Turkey)* գործը, թիվ 19392/92, 30.1.98, (1998) 26 EHRH 121, կետ 29:
³ *Բանկովիչն ընդդեմ Բելգիայի և Այլոն (Bankovic v Belgium and others)* գործը, թիվ 52207/99, որոշում 12.12.01, 11 BHRC, 435, կետ 59:
⁴ Տ'ես նույն տեղում, կետ 67:
⁵ Տ'ես, օրինակ, *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)* գործը, թիվ 6780/74 և թիվ 6950/75, 10.7.76, (1982) 4 EHRH 482, կետ 83, *Ռեյնեթն Ֆրանսիայի (Reinette v France)* գործը, թիվ 14009/88, որոշում 2.10.89, (1989) 63 DR 189, *Լուիզիդոն ընդդեմ Թուրքիայի (Loizidou v Turkey)* գործը, թիվ 15318/89, 18.12.96, (1997) 23 EHRH 513, կետ 52 և *Իսսան և Այլոն ընդդեմ Թուրքիայի (Issa and others v Turkey)* գործը, թիվ 31821/96, որոշում 30.5.00:
⁶ *Վիլլենն ընդդեմ Լիխտենշտեյնի (Wille v Liechtenstein)* գործը, թիվ 28396/95, 27.5.97, (1997) 24 EHRH CD 45:
⁷ Թիվ 15318/89, 23.3.95, Շարք Ա, թիվ 310:
⁸ *Բանկովիչն ընդդեմ Բելգիայի և Այլոն (Bankovic v Belgium and others)* գործը, թիվ 52207/99, որոշում 12.12.01, 11 BHRC, 435, կետ 71: Դատարանը ճանաչեց, որ այդպիսի արդյունավետ վերահսկողությունը կարող է իրականացվել «ժամանակավորապես». տ'ես *Իսսան և Այլոն ընդդեմ Թուրքիայի (Issa and others v Turkey)* գործը, թիվ 31821/96, 16.11.04, կետ 74 (Թուրքական զինված ուժերը, որոնք ռազմական օպերացիաներ են իրականացնում հյուսիսային Իրաքում):

գործողություններն, ինչպես նաև այն գործողությունները, որոնք իրականացվում են տվյալ պետությունում գրանցված կամ նրա դրոշի ներքո գտնվող նավերում և օդանավերում:⁹

*Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի*¹⁰ միջպետական գործում Դատարանը գտավ, որ քանի որ Թուրքիան արդյունավետ վերահսկողություն ուներ հյուսիսային Կիպրոսի նկատմամբ, նրա պատասխանատվությունը չէր սահմանափակվում միայն իր սեփական զինվորների կամ պաշտոնյաների գործողություններով, այլ տարածվում էր նաև տեղական իշխանությունների գործողությունների նկատմամբ, որոնք գոյատևում էին Թուրքական ռազմական և այլ աջակցության արդյունքում: Ի տարբերություն դրա, *Բանկովիչն ընդդեմ Բելգիայի և Այլոք գործում*¹¹, Դատարանը գտավ, որ 1999 թվականին Կոսովոյի հակամարտության ընթացքում Բելգրադի կենտրոնում RTS հեռուստակայանի ռմբակոծման ՆԱՏՕ-ի օպերացիան իրականացնելիս Եվրոպայի խորհրդի/ՆԱՏՕ-ի անդամ պատասխանող պետությունները գործել են իրենց «իրավագործությունից» դուրս: Այնուամենայնիվ *Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Ocalan v Turkey)*¹² գործով իր վճռում Դատարանի պալատը ընդարձակեց իրավագործության հասկացության սահմանները, գտնելով, որ Նայրոբիի օդանավակայանի միջազգային գոտում գտնվող օդանավում Թուրքական անվտանգության գործակալների կողմից Քրդական բանվորական կուսակցության (ԲԲԿ) առաջնորդի ձերբակալումը դիմումատուին միանգամից դրել է Թուրքական պետության արդյունավետ վերահսկողության, հետևաբար նաև «իրավագործության» ներքո: Դատարանն այս դեպքում *Բանկովիչից* տարբեր որոշում կայացրեց այն հիմքով, որ դիմողը թուրք պաշտոնյաների կողմից ֆիզիկապես հարկադրվել էր Թուրքիա վերադառնալ և Թուրքիա վերադառնալուց հետո գտնվել է նրանց իշխանության ու վերահսկողության տակ:

*Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի (Assanidze v. Georgia)*¹³ գործը վերաբերում էր Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում դիմողի շարունակական կալանքին՝ ի խախտումն Վրաստանի օրենսդրության: Վրաստանի կառավարությունը իրավական և քաղաքական քայլեր էր ձեռնարկել Աջարիայի տեղական իշխանությունների կողմից դիմողի ազատ արձակումն ապահովելու համար, սակայն առանց որևէ օգուտի: Մեծ Պալատը վճռեց, որ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը Վրաստանի տարածքի բաղկացուցիչ մասն է կազմում և ենթակա է դրա իրավագործությանն ու վերահսկողությանը: Այսպիսով, չնայած Դատարանը եզրակացրեց, որ անօրինական կալանքն ուղղակիորեն վերագրվում է Աջարիայի իշխանություններին, Կոնվենցիայի հիման վրա պատասխանատվությունը կրում է միայն Վրաստանը: Չնայած ենթադրվում է, որ «իրավագործությունը» սովորաբար իրականացվում է պետության տարածքում, Դատարանը հաստատեց, որ այս կանխավարկածը կարող է բացառիկ դեպքերում սահմանափակվել, մասնավորապես այն դեպքերում, երբ պետությունը զրկված է իր տարածքի մի մասում իր իշխանությունն իրականացնելուց: *Իլիաշկուն և այլոք ընդդեմ Ռուսաստանի և Մոլդովայի (Iliascu and others v Russia and Moldova)*¹⁴ գործում, դիմողները բողոքարկում էին Կոնվենցիայի տարբեր խախտումներ, որոնք տեղի էին ունեցել «Մերձդնեստրի Մոլդովայի Հանրապետությունում», որը լինելով Մոլդովայի մի շրջան իր անկախությունն էր հռչակել 1991 թվականին, սակայն չի ճանաչվում միջազգային հանրության կողմից: Մոլդովայի Կառավարությունը պնդում էր, որ Մերձդնեստրի շրջանն իր վերահսկողության տակ չի գտնվում: Այս տեսակետը Դատարանն ընդունեց, այնուամենայնիվ եզրակացնելով, որ դիմողները 1-ին Յոթվածի իմաստով գտնվում էին Մոլդովայի

⁹ *Բանկովիչն ընդդեմ Բելգիայի և Այլոք (Bankovic v Belgium and others)* գործը, թիվ 52207/99, որոշում 12.12.01, 11 BHRC, 435, կետ 73:

¹⁰ Թիվ 25781/94, 10.5.01, կետ 77: Տես նաև *Ջավիթ Ան ընդդեմ Թուրքիայի (Djavit An v Turkey)* գործը, թիվ 20652/92, 20.2.03, 18-23 կետեր:

¹¹ Թիվ 52207/99, որոշում 12.12.01, 11 BHRC, 435: Փանգաղը «իրավագործության» հիմքով անընդունելի հռչակելիս, Դատարանը Բանկովիչի գործով կարիք չուներ որոշելու արդյոք պատասխանող պետությունները կարող էին Եվրոպական կոնվենցիայի հիման վրա պատասխանատու լինել ՆԱՏՕ-ի գործողությունների համար: Նման խնդիր ծագեց *Բեհրամին ընդդեմ Ֆրանսիայի (Behrami v France)* թիվ 71412/01 գործում, որտեղ դիմողը բողոքարկում էր ֆրանսիական KFOR ուժերի անգործությունը Կոսովոյում ռումբի պայթյունի հետևանքով մի երեխայի մահվան կապակցությամբ: Գործը 2-րդ հոդվածի մասով կառավարությանը ծանուցվել է 2003 թվականի սեպտեմբերին:

¹² Թիվ 46221/99, 12.3.03, (2003) 37 EHRR 10 (Փանգաղը Կոնվենցիայի 43-րդ հոդվածի հիման վրա ներկայումս գտնվում է Մեծ Պալատի վարույթում):

¹³ Թիվ 71503/01, 8.4.04:

¹⁴ Թիվ 48787/99, 8.7.04:

Հանրապետության իրավագործության ներքո և վճռեց, որ Սուլդովայի իշխանությունները սկսած 2001 թվականից բավարար քայլեր չէին ձեռնարկել դիմողների՝ կալանքից ազատ արձակումն ապահովելու համար: Հետևաբար, Դատարանը եզրակացրեց, որ Կոնվենցիայի հիման վրա ծագում է Սուլդովայի Կառավարության պատասխանատվությունը՝ իր դրական պարտավորությունները չկատարելու առումով: Դատարան նաև գտավ, որ Ռուսաստանի Կառավարությունը ևս պատասխանատվություն է կրում կապված՝

Մերձդնեստրի անջատողականների անօրինական գործողությունների հետ, նկատի ունենալով այն ռազմական և քաղաքական աջակցությունը, որ [Ռուսաստանի Կառավարությունը] ցուցաբերում էր նրանց անջատողական ռեժիմի ստեղծման հարցում և նրա զինված ուժերի մասնակցությունը ռազմական գործողություններին: Այդպես գործելով Ռուսաստանի Դաշնությունը քաղաքական և ռազմական աջակցություն էր ցուցաբերում Սուլդովայի Հանրապետության մաս հանդիսացող Մերձդնեստրի շրջանում անջատողական ռեժիմի ստեղծմանը:¹⁵

Ռուսաստանի պատասխանատվության առկայության մասին Դատարանի եզրակացության կայացման համար հիմք հանդիսացած գործոններից են նաև տարածաշրջանում Ռուսաստանի շարունակական ռազմական ներկայությունը, և նրա ցուցաբերած ֆինանսական աջակցությունը: Հետևաբար, «Մերձդնեստրի Սուլդովայի Հանրապետությունը», եղել է Ռուսաստանի Դաշնության արդյունավետ իրավագործության, կամ առնվազն որոշիչ ազդեցության ներքո, և բոլոր դեպքերում ... այն գոյատևում է Ռուսաստանի Դաշնության կողմից ցուցաբերվող ռազմական, տնտեսական, ֆինանսական և քաղաքական աջակցության արդյունքում»:¹⁶

*Բոսֆոր Հավա Յոլլարի Տուրիզմ Վե Թիկարետ ԱՄ-ն ընդդեմ Իռլանդիայի (Bosphorus Hava Yolları Turizm Ve Ticaret AS v Ireland)*¹⁷ գործը վերաբերում էր Իռլանդիայում դիմողի վարձակալած օդանավը կալանքի տակ վերցնելուն, որը Հարավսլավիայի Ֆեդերատիվ Հանրապետության նկատմամբ ՄԱԿ-ի սանկցիաների իրականացմանն ուղղված ԵՄ Կանոնների կիրառման արդյունք էր¹⁸: Դատարանը չանդրադարձավ այն հարցին, թե արդյոք Կառավարությունը Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով կարող էր պատասխանատվություն կրել գործողությունների համար, որոնք նա կատարել էր անմիջականորեն գործող ԵՄ Կարգավորումներից բխող իր պարտականությունների հետ կապված:

Այն դիմողը, ով Եվրոպական դատարան գանգատ կներկայացնի այնպիսի հարցի կապակցությամբ ինչը կպարզվի, որ պատասխանող պետության իրավագործությունից դուրս է, անընդունելի կհռչակվի հոդված 35(3)-ի հիման վրա: Սա քննարկվում է ստորև՝ 5-րդ Բաժնում:

Կոնվենցիայի կարևոր կողմերից մեկն այն է, որ այն չի հստակեցնում թե յուրաքանչյուր պայմանավորվող կողմ ինչպես պետք է ապահովի Կոնվենցիայի պահանջների պահպանումը: Դա յուրաքանչյուր պետության խնդիրն է: Օրինակ, Հոդված 1-ինը չի պահանջում ներպետական օրենսդրությունում Կոնվենցիայի պարտադիր ինկորպորացիա:

Քանի որ 1-ին հոդվածն ինքնին սահմանում է պայմանավորվող կողմերի առաջնային պարտականությունը՝ երաշխավորելու Կոնվենցիայով սահմանված նյութական իրավունքների իրականացումը, այն չի կարող որպես Կոնվենցիայի առանձին խախտում վիճարկվել: Այդ պատճառով, Եվրոպական Հանձնաժողովը մերժեց Կիպրոսի Կառավարության փաստարկն առ այն, որ *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)*¹⁹ գործում խախտվել է 1-ին հոդվածը: Այնուամենայնիվ, 1-ին հոդվածը Դատարանը կարող է վկայակոչել այլ նյութական իրավունքների հետ համակցությամբ, և կապված է այն հիմնարար սկզբունքի հետ, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի երաշխավորի գործնական ու արդյունավետ այլ ոչ թե տեսական և վերացական իրավունքներ²⁰ (տես նաև վերը՝ 6.9 մասում): Դատարանն 1-ին հոդվածի վրա հաճախ հղում է կատարում նյութական իրավունքի գործողության շրջանակը ընդլայնելու համար: Օրինակ, 1-ին հոդվածը վկայակոչվել է 2-րդ

¹⁵ Տ՛ես նույն տեղում, կետ 382:

¹⁶ Տ՛ես նույն տեղում, կետ 392:

¹⁷ Թիվ 45036/98, որոշում 13.9.01:

¹⁸ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 820 (1993) Բանաձևի կատարումն ապահովող ԵՄ Կարգավորում 990/93:

¹⁹ Թիվ 6780/74 և թիվ 6950/75, 10.7.76, (1982) 4 EHRR 482:

²⁰ Տ՛ես, օրինակ, *Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (Soering v UK)* գործը, թիվ 14038/88, Շարք Ա, թիվ 161, 7.7.89, 11 EHRR 439, կետ 87, *Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի (Cruz Varas v Sweden)* գործը, (1992) 14 EHRR 1, կետ 99:

հողվածով նախատեսված կյանքի իրավունքը պաշտպանելու պարտականության հետ համակցությամբ, ինչպես նաև նպատակ ունենալով հիմնավորել այն մոտեցումը, որ 2-րդ հողվածը պահանջում է արդյունավետ պաշտոնական հետաքննության իրականացում այն դեպքերում, երբ մարդը սպանվել է ուժի գործադրման հետևանքով:²¹

Դատարանն այդ հողվածի վրա կարող է հղում կատարել նաև այն դեպքում, երբ քննարկման առարկա է հանդիսանում պետության դրական պարտավարության շրջանակի որոշման հարցը²² (տե՛ս նաև վերը՝ 6.11 մասում): Օրինակ, *U-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*²³ (*A v UK*) գործում Դատարանը վկայակոչել էր 1-ին հողվածն առ այն, որ պատասխանող Կառավարությունը կարող էր Կոնվենցիայի 3-րդ հողվածի իմաստով պատասխանատվություն կրել նրա համար, որ չի ապահովել, որպեսզի օրենքը պատշաճ կերպով պաշտպանի մանկահասակ երեխային իր խորթ հոր կողմից ծեծի ենթարկելուց: Դատարանը վճռեց, որ 1-ին հողվածը 3-րդ հողվածի հետ համատեղ վերցրած, պետությունից պահանջում է ձեռք առնել համապատասխան միջոցներ ապահովելու, որպեսզի իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք չենթարկվի խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատասխանատվության, ներառյալ մասնավոր անձանց կողմից ցուցաբերվող վատ վերաբերմունքի:²⁴ Հետևաբար, պետությունը պետք է ապահովի այնպիսի կանխարգելիչ արդյունավետ միջոցների առկայություն, որոնք կկանխեն երեխաների և խոցելի այլ անձանց նկատմամբ նման վերաբերմունքի դրսևորումը:

7.2. ՀՈՂՎԱԾ 2. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հողվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ) օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ) խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

Կյանքի իրավունքի պաշտպանությունը Կոնվենցիայով երաշխավորվող ամենահիմնական իրավունքներից մեկն է, որը «պահպանում է Եվրոպայի խորհուրդը կազմող ժողովրդավարական հասարակությունների հիմնական արժեքներից մեկը»²⁵: Հետևաբար, կյանքից զրկելը ենթակա է Դատարանի կողմից «ամենամանրազնին քննության»²⁶: Կոնվենցիայի 15-րդ հողվածի համաձայն գոյություն չունեն Զոդված 2-ից շեղվելու հիմքեր (բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով զոհերի): Զոդվածը 2-ը պարունակում է ինչպես պոզիտիվ այնպես էլ նեգատիվ պարտավորություններ՝ պոզիտիվ պարտավորությունն է պաշտպանել կյանքը, իսկ նեգատիվ պարտավորությունը՝ ձեռնպահ մնալ կյանքից անօրինական զրկելուց: Պոզիտիվ պարտավորությունը բխում է Զոդված 2-ի բովանդակությունից՝ Կոնվենցիայի Զոդված 1-ի հետ համակցությամբ, և արդյունավետ պաշտոնական հետաքննություն իրականացնելու պարտավորություն է

²¹ Տե՛ս, օրինակ, *Աքքենն ընդդեմ Միացյալ Թագավորության (McCann v UK)* գործը, թիվ 18984/91, Շարք Ա, թիվ 324, 27.9.95, (1996) 21 EHR 97, կետ 161, *Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի (Tanrikulu v Turkey)* գործը, թիվ 26763/94, 8.7.99, (2000) 30 EHR 950, կետ 101, *Աքքոյն ընդդեմ Թուրքիայի (Akkoc v Turkey)* գործը, թիվ 22947/93 և թիվ 22948/93, 10.10.00, (2002) 34 EHR 51:

²² Տե՛ս, օրինակ, *Վգթ Վերեյն Գեգեն Թիերֆաբրիկենն ընդդեմ Շվեյցարիայի (Vgt Verein Gegen Tierfabriken v Switzerland)* գործը, թիվ 24699/94, 28.6.01, (2002) 34 EHR 4, 45-47 կետեր՝ հեռուստատեսությամբ քաղաքական գովազդ հեռարձակելու վերաբերյալ գործում 1-ին և 10-րդ հողվածների կիրառելիությունը:

²³ Թիվ 25599/94, 93.9.98, (1999) 27 EHR 611:

²⁴ Տե՛ս, նաև, *Զ-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Z and others v UK)* գործը, թիվ 29392/95, 10.5.01, (2002) 34 EHR 3, կետ 73:

²⁵ Տե՛ս, օրինակ, *Աքքենն ընդդեմ Միացյալ Թագավորության (McCann v UK)* գործը, թիվ 18984/91, Շարք Ա, թիվ 324, 27.9.95, (1996) 21 EHR 97, կետ 147:

²⁶ Տե՛ս, օրինակ, *Գյուլն ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHR 28, կետ 78:

սահմանում այն դեպքերում, երբ մարդը սպանվել է ուժի գործադրման²⁷ կամ այլ մահացու պատահարի հետևանքով:

Հոդված 2-ը վերաբերում է ինչպես դիտավորյալ այնպես էլ անզգույշ սպանություններին: Հոդված 2-ի 2-րդ մասը սահմանում է դեպքերի այն սպառնիչ ցանկը, երբ թույլատրվում է ուժ գործադրել (ինչը *բացարձակապես անհրաժեշտ է*), որի արդյունքը, որպես ուժի գործադրման անցանկալի հետևանք, կարող է լինել կյանքից զրկելը²⁸, ինչպես նաև կանոնակարգելով կյանքից դիտավորությամբ զրկելու դեպքերը: Ուժի գործադրումը պետք է խստագույնս համաչափ լինի Հոդված 2-ի 2-րդ մասով նախատեսված համապատասխան նպատակին: Այն պահանջում է, ի նկատի ունենալ հետապնդվող նպատակի ելությունը, տվյալ դեպքում կյանքին սպառնացող վտանգի բնույթը և հավանականության չափը, որ արդյունքում կարող է մարդ սպանվել:

Հոդված 2-ի բովանդակությունը քննարկվում է ստորև հետևյալ վերնագրերի ներքո՝ ոստիկանական միջոցառումներ (7.2.1), մահվան դեպքերը ազատագրկման վայրերում (7.2.2), անհայտ կորելու դեպքերը (7.2.3), ինքնասպանություններն ազատագրկման վայրերում (7.2.4), մահապատիժը (7.2.5), հանցագործությունից տուժողները (պետական և ոչ պետական մարմիններ). [հանցագործությունների] կանխման և հետաքննություն անցկացնելու պարտավորությունները (7.2.6), շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող գործեր (7.2.7) և առողջապահություն, հղիության արհեստական ընդհատում, էֆթանագիա և ինքնասպանությանն օժանդակելը (7.2.8):

7.2.1 Ոստիկանական միջոցառումներ

Ոստիկանության կամ անվտանգության ուժերի կողմից մահաբեր ուժի կիրառումը ենթակա է Դատարանի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Ոստիկանական գործողությունների պլանավորումը և հսկողությունը պետք է «հնարավորինս» նվազագույնի հասցնի մահաբեր ուժի կիրառումը:²⁹ *Մքքենը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (McCann and others v UK)*³⁰ ուղեմիջային գործում, որը վերաբերում էր SAS-ի կողմից Ջիբրալթարում գործող ԻՀԲ-ի (IRA) Ստորաբաժանման երեք անդամների սպանությանը, Դատարանը նշեց, որ կիրառված ուժի «բացարձակապես անհրաժեշտ» լինելը գնահատելիս, պետք է կիրառել ավելի խիստ և համոզիչ չափանիշ քան այն, որ կիրառվում է պետության գործողությունները «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» լինելը գնահատելիս:³¹ Դատարանը չընդունեց այն փաստարկները, որ Հոդված 2-ին ներպետական օրենսդրության և պրակտիկայի անհամապատասխանությունը (օրինակ պետական գործակալների ուսուցումը և հրահանգավորումը) ինքնին Կոնվենցիայի խախտում են հանդիսանում և որ իրականացված հետաքննությունը բավարար չէր: Դատարանը նաև գտավ, որ զինվորներն անկեղծորեն և ողջամտորեն (չնայած սխալմամբ) հավատացել են, որ անհրաժեշտ էր զենք կիրառել կասկածյալների նկատմամբ՝ նրանց կողմից ռումբը պայթեցնելը և մարդկային լուրջ կորուստները կանխելու համար: Այնուամենայնիվ, Դատարանը տասն ընդդեմ իննի ձայների հարաբերակցությամբ վճռեց, որ Հոդված 2-ը խախտվել էր ոստիկանական գործողության ոչ պատշաճ պլանավորման և իրականացման հիմքով: Դատարանը կենտրոնացել էր կասկածյալների Ջիբրալթար ճանապարհորդելը չկանխելու որոշման, իշխանությունների կողմից իրենց հետախուզական եզրահանգումների սխալ լինելու, զոնե մասամբ, հնարավորության վրա բավարար ուշադրություն չդարձնելու, և զինվորների կողմից, երբ նրանք սկսել են կրակ բացել, միանգամից մահաբեր ուժի կիրառմանը դիմելու վրա: Դատարանում *Անդրոնիկուն և Կոնստանտինուն ընդդեմ Կիպրոսի (Andronicou and Constantinou v Cyprus)*³² գործով կրկին ձայների նվազագույն տարբերություն գրանցվեց, ինչը հավանաբար

²⁷ Տե՛ս, օրինակ, *Մքքենը ընդդեմ Միացյալ Թագավորության (McCann v UK)* գործը, թիվ 18984/91, Շարք Ա, թիվ 324, 27.9.95, (1996) 21 EHRR 97, կետ 161:

²⁸ *Ստյուարտն ընդդեմ Միավորված Թագավորության (Stewart v UK)* գործը, թիվ 10044/82, որոշում 10.7.84, 39 DR 162, 169-171 կետեր:

²⁹ Տե՛ս, օրինակ, *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v Bulgaria)* գործը, թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04, (2004) 39 EHRR 37, կետ 95:

³⁰ Թիվ 18984/91, Շարք Ա, թիվ 324, 27.9.95, (1996) 21 EHRR 97:

³¹ Տե՛ս նույն տեղը, կետ 149:

³² Թիվ 25052/94, 9.10.97, (1998) 25 EHRR 491:

արտացոլում էր այն դժվարությունները, որոնք հատուկ են ոստիկանական գործողությունների գնահատմանը: Այդ գործով Դատարանը տղամարդուն և նրա հարսնացուին, ում նա պատանդ էր պահում բնակարանում, ոստիկանության կողմից սպանելու հիմքով կյանքի իրավունքի խախտում չարձանագրեց (հինգն ընդդեմ չորսի ծայների հարաբերակցությամբ): Նրանք սպանվել էին մի քանի ժամ տևած բանակցություններից հետո ոստիկանության կողմից բնակարանը գրոհելու ընթացքում: Դատարանը վճռեց, որ մահաբեր ուժի գործադրումը չի գերազանցել «բացարձակապես անհրաժեշտ»-ի սահմանները և գտավ, որ պատանդի ազատման գործողությունը պատշաճ կերպով պլանավորվել և կազմակերպվել էր: Այսպիսի իրադրություններում կիրառվող չափանիշի էությունը կայանում է նրանում, որ իրականացվող գործողությունը պետք է հնարավորինս նվազագույնի հասցնի դրանում ներգրավված անձանց կյանքին սպառնացող ցանկացած վտանգ: *Անդրոնիկուի* գործից տարբերվում է Դատարանի կողմից ավելի ուշ քննված *Գյուլն ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)*³³ գործը, որտեղ դիմողի անուսինը սպանվել էր ոստիկանության ծառայողների կողմից՝ վաղ առավոտյան ժամերին իր դուռը թակած ոստիկաններին ներս թողնելիս. «... ինքնաձիգից ամեղ քաղաքացիական անձանցով, կանանցով և երեխաներով բնակեցված բնակելի տան մեջ անտեսանելի թիրախ վրա կրակ բացելը ... խիստ անհամաչափ էր»: Ի տարբերություն դրա, *Սհմետ Օզկանը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ahmet Ozkan and others v Turkey)*³⁴ գործով, Թուրքական անվտանգության ուժերի կողմից գյուղի վրա, ի պատասխան այնտեղից իրենց վրա կատարված կրակոցների, ինտենսիվ կրակ բացելը գնահատվեց կյանքը պաշտպանելու համար «բացարձակապես անհրաժեշտ»: Այնուամենայնիվ, նրանց կողմից հետագայում այնտեղ քաղաքացիական բնակչության շրջանում տուժածների առկայությունը չստուգելը խախտել է Զոդված 2-ով նախատեսված կյանքը պաշտպանելու պարտականությունը:

*Բրադին ընդդեմ Միացյալ Թագավորության (Brady v UK)*³⁵ գործով դիմողի հայրը կողոպուտի ժամանակ սպանվել էր ոստիկանության կողմից: Նախապես տեղեկացված լինելով, ոստիկանությունը սպասում էր դեպքի վայրում (բանվորների ակունքում) և ոստիկանության ծառայողները հետաքննության ընթացքում ցուցմունք էին տվել, որ մարդու վրա կրակել էին բացել, երբ նա իր աջ ձեռքում գտնվող մի առարկայով (որն, ինչպես պարզվեց, փոքր լապտեր էր) սպառնալից շարժումներ էր արել: Գանգատը անընդունելի հռչակելով, Դատարանը գտավ, որ մահաբեր ուժի կիրառումը բացարձակապես անհրաժեշտ էր եղել ոստիկանությանը, Զոդված 2(2)(a)-ի իմաստով, անօրինական ոտնձգությունից պաշտպանելու համար: *Բելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK)* գործով³⁶ դիմողի որդին սպանվել էր զինվորների կողմից Բելֆաստում ճանապարհային արգելքների միջով մեքենա վարելու և զվարճանալու ընթացքում: Գանգատն ակնհայտորեն անհիմն լինելու հիմքով մերժելով, Զանձնաժողովն ընդունեց, որ զինվորների գործողություններն ուղղված էին այն անձանց օրինական ձերբակալմանը (Զոդված 2(2)(b)), ովքեր ողջամտորեն կասկածվում էին ահաբեկիչ լինելու մեջ, և որ ուժի կիրառումն արդարացված էր (հաշվի առնելով Զյուսիսային Իռլանդիայում տեղի ունեցող իրադարձությունները): Այնուամենայնիվ, *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v Bulgaria)* գործով³⁷ Զոդված 2-ը խախտվել էր զինվորական ոստիկանության կողմից առանց թույլտվության պարտադիր զինվորական ծառայության վայրն ինքնական լքած երկու զնչու տղամարդկանց ձերբակալելիս նրանց սպանելու արդյունքում: Ոստիկանության ծառայողները տեղյակ էին, որ նրանցից ոչ մեկը զինված չեն եղել, և նախկինում որևէ մեկի նկատմամբ բռնություն կամ որևէ այլ սպառնալիք չեն կիրառել: Սրա արդյունքում Դատարանը միանշանակապես եզրակացություն արեց առ այն, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «որևէ դեպքում դա չի կարող «բացարձակապես անհրաժեշտ» լինել օգտագործել այդ տիպի հրազեն, որպեսզի ձերբակալեն առանց բռնության գործադրման կատարված հանցագործության կատարման մեջ կասկածվող անձին, ով չի սպառնացել որևէ մեկի կյանքին կամ առողջությանը, նույնիսկ այն դեպքերում, երբ դրա չկիրառման արդյունքում

³³ Թիվ 22676/93, 14.10.00, կետ 82, (2002) 34 EHRR 28:
³⁴ Թիվ 21689/93, 6.4.04:
³⁵ Թիվ 55151/00, որոշում 3.4.01: Տե՛ս նաև *Բուբբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Bubbins v UK)* գործը, թիվ 50196/99, որոշում 27.11.03 (ատրճանակի կրկնօրինակ կրող մարդուն սպանելը):
³⁶ Թիվ 17579/90, որոշում 31.1.93, 74 DR 139:
³⁷ Թիվ 43557/98 և թիվ 43579/98, 26.2.04, (2004) 39 EHRR 37: Այս գործը նաև դիտարկվել է ստորև 7.2.6 մասում կապված Զոդված 14-ի հետ:

հետապնդվող կասկածյալը կարող է խույս տալ ձերբակալությունից»³⁸: Դատարանը նաև գտավ, որ 2-րդ հոդվածի խախտումն առավել կոպիտ էր դառնում անհամաչափ ուժի գործադրման փաստի առկայության պայմաններում: Բացի դրանից, զինվորական ոստիկանության կողմից հրազենի գործադրման կանոնները հրապարակված չէին, և չէին պահանջում ոչ հետապնդվողի կողմից կատարված արարքի կամ կիրառված սպառնալիքի բնույթի, ոչ էլ դեպքի այլ հանգամանքների գնահատում: Տեղի չէր ունեցել նաև այդ երկու անձանց կողմից կիրառվելիք հնարավոր սպառնալիքի վերաբերյալ որևէ քննարկում ոստիկանների կողմից իրենց միջոցառումը մշակելիս:

Ստյուարտն ընդդեմ Միացյալ Թագավորության (Stewart v UK) գործում³⁹, Հանձնաժողովը 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց կապված Բելֆաստում բրիտանացի զինվորի կողմից 13-ամյա մի երեխայի սպանության առնչությամբ, այն հիմքով, որ պլաստիկ փամփուշտների օգտագործումը արդարացված է, եթե դրանք կիրառվում են դիմադրությունը հաղթահարելու համար (հոդված 2(2)(c)), իսկ մահը վրա էր հասել այն պատճառով, որ երբ զինվորական կրակել էր նշանառության տակ վերցնելով անհնազանդության երթը գլխավորող անձի ոտքը, փամփուշտ շեղելով իր ուղղությունը դիպել էր երեխային:

1990-ական թվականների կեսերից սկսած Հանձնաժողովը և Դատարանը քննել են մի շարք գանգատներ, կապված հարավ-արևելյան Թուրքիայում անվտանգության ուժերի գործողությունների հետևանքով պատճառված մահերի հետ: Օրինակ, *Օգյուրն ընդդեմ Թուրքիայի (Ogur v Turkey)* գործում⁴⁰ Դատարանը 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց կապված Թուրքական անվտանգության ուժերի կողմից մշակված և իրականացված միջոցառման հետ, որը հանգեցրեց Մուսա Օգյուրի սպանությանը, ինչպես նաև 2-րդ հոդվածի առանձին խախտում կապված այդ միջադեպի կապակցությամբ ներպետական իշխանությունների կողմից արդյունավետ հետաքննություն չիրականացնելու հետ⁴¹ (հետաքննություն իրականացնելու պահանջի մասին տես նաև ստորև 7.2.2 մասում, որը վերաբերում է ազատագրված վայրերում մահվան դեպքերին): *Էրգին ընդդեմ Թուրքիայի (Ergi v Turkey)* գործում⁴², Դատարանը կրկին 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց անվտանգության ուժերի կողմից մշակված և իրականացված միջոցառման թերությունների և դրանց կապակցությամբ պատշաճ և արդյունավետ հետաքննություն չիրականացնելու հիմքով⁴³: Այնուամենայնիվ, մի շարք գործերում, ներառյալ *Էրգիի* գործը,⁴⁴ Ստրասբուրգի մարմինները գտան, որ բացակայում են բավարար փաստեր և ապացույցներ, որոնք հիմք կտան առանց ողջամիտ կասկածի եզրակացնելու, որ զոհերը դիտավորությամբ սպանվել են պետական գործակալների կողմից⁴⁵:

Այսպես, *Էրգիի* գործում, Դատարանը, ինքնին դիմողի քրոջ ենթադրյալ անօրինական սպանության կապակցությամբ, 2-րդ հոդվածի խախտում չարձանագրեց:

7.2.2 Մահվան դեպքերը ազատագրված վայրերում

2-րդ հոդվածը պետությունների վրա պոզիտիվ պարտավորություն է դնում ապահովելու, որպեսզի օրենքը պատշաճ կերպով պաշտպանի կյանքի իրավունքը, ինչպես նաև պարտավորեցնում կիրառել այդ օրենքը: Հոդված 2-ը միշտ պետք է դիտարկվի 13-րդ հոդվածի հետ միասին, որը, նկատի ունենալով կյանքի պաշտպանության իրավունքի հիմնաքարային

³⁸ Տե՛ս նույն տեղը, կետ 105:

³⁹ Թիվ 10044/82, որոշում 10.7.84, 39 DR 162:

⁴⁰ Թիվ 21594/93, 20.5.99, (2001) 31 EHRR 40:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, 71-84 կետեր, Տես նաև *Դեմիրայն ընդդեմ Թուրքիայի (Demiray v Turkey)* գործը, թիվ 27308/95, 9.11.00:

⁴² Թիվ 23818/94, 28.7.98 (2001) 32 EHRR 18:

⁴³ Տե՛ս նույն տեղը, 68-86 կետեր:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, 77 և 78 կետեր:

⁴⁵ Տե՛ս *Յիլմազն ընդդեմ Թուրքիայի գործով (Yilmaz v Turkey)* գործով, թիվ 35875/97, 29.7.04, Դատավոր Բոնեելլոյի մասնակի տարբերվող կարծիքը, որտեղ նա վիճարկում էր 2-րդ հոդվածի «ըստ էության», այլ ոչ թե զուտ «ընթացակարգային» խախտումը: Մինչ պալատի մեծամասնությունը գտավ, որ պետությունը դիմողի կնոջ սպանության կապակցությամբ պատշաճ և արդյունավետ հետաքննություն չի իրականացրել, նա պնդեց, որ դիմողը ողջամիտ կասկածից վեր չի ապացուցել, որ պետությունը պատասխանատու է այդ սպանության համար: Ըստ Դատավոր Բոնեելլոյի, դա հավասարազոր է «պետության բացթողումների մեղավորությունը դրանց զոհերի վրա դնելուն»:

կարևորությունը, մահվան դեպքերի կապակցությամբ իրականացվող հետաքննությունների նկատմամբ խիստ պահանջներ է սահմանել⁴⁶: Այն, ազատագրկման վայրերում մահվան դեպքերի առնչությամբ պահաջում է, որպեսզի իրականացվի մահվան առաջացման հանգամանքների պատշաճ և արդյունավետ հետաքննություն, և որ դրա իրականացման համար պատասխանատու անձինք ենթակա լինեն վերահսկողության (դատախազության կողմից կամ այլ կերպ): Այն նաև պահանջում է, որպեսզի բողոք բերած անձանց համար ապահովվի հետաքննությանը արդյունավետ մասնակցություն, և որ վարույթը հնարավորություն ընձեռնի հայտաբերել և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:⁴⁷

Սովորաբար, Կոնվենցիայի խախտման առկայությունը ապացուցելու պարտականությունը դրված է դիմողի վրա: Այնուամենայնիվ, ապացուցման պարտականությունը անցնում է պետությանը, եթե մահը վրա է հասել ազատագրկման վայրում: Այդպիսի դեպքերում, ներպետական իշխանություններն են կրում ապացուցման պարտականությունը, և պետք է «բավարար և համոզիչ բացատրություն» կամ «ողջամիտ բացատրություն» ներկայացնեն կապված կալանավորված անձի սպանությանը հանգեցրած դեպքերի հետ⁴⁸, և համապատասխան արձանագրություններ վարեն: *Սալմանն ընդդեմ Թուրքիայի (Salman v Turkey)* գործում⁴⁹, Դատարանն այդ պարտավորությունը բնորոշեց հետևյալ կերպ.

Ազատագրկման վայրերում գտնվող անձինք խոցելի կարգավիճակում են և պետական իշխանությունները պարտավոր են պաշտպանել նրանց: Յետևաբար, երբ անձը կալանավայր է տարվում առողջ վիճակում, իսկ ազատ արձակվելու պահին ունենում է վնասվածքներ, պետության խնդիրն է ողջամիտ բացատրություն ներկայացնել, թե այդ վնասվածքներն ինչպես են պատճառվել: ... Ազատագրկման վայրում գտնվող անձի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի համար հաշվետու լինելու իշխանությունների պարտավորությունը հատկապես խիստ է այն դեպքերում, երբ այդ անձը մահացել է:

Եթե իրադարձությունների մասին տեղեկատվությունը ամբողջությամբ, կամ դրանց գերակշիռ մասով գտնվում են իշխանությունների բացառիկ տնօրինման տակ, ինչպես որ տեղի է ունենում ազատագրկման վայրերում նրանց հսկողության տակ գտնվող անձանց դեպքում, ապա նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխավարկած է առաջանում երբ գործ ունենք վնասվածքների կամ մահվան դեպքերի հետ: Իսկապես, իշխանությունների վրա է դրված ապացուցման պարտականությունը՝ այդ կապակցությամբ ներկայացնելու բավարար և համոզիչ բացատրություններ:⁵⁰

Թանլին ընդդեմ Թուրքիայի (Tanli v Turkey) գործում⁵¹ 22-ամյա առողջ տղամարդը մահացել էր ազատագրկման վայրում գտնված կարճ ժամանակահատվածում: Կառավարությունը պնդում էր, որ նա մահացել է բնական մահով, սակայն այդ փաստը երբևէ չհաստատվեց և հետևաբար, Դատարանը եզրակացրեց, որ Կառավարությունը նրա մահվան կապակցությամբ ողջամիտ կամ բավարար բացատրություններ չի ներկայացրել (և մասնավորապես չեշտեց առաջին դիախոզման ժամանակ արված բացթողումները):

Չափանիշը, որով Դատարանն առաջնորդվում է Կոնվենցիայի խախտման փաստը գնահատելիս, հանդիսանում է առանց ողջամիտ կասկածի ապացուցումը: Այս չափանիշը համարվում է բավարարված, եթե առկա է «բավականաչափ ուժեղ, հստակ և համադրելի

⁴⁶ Տե՛ս, օրինակ, *Կայան ընդդեմ Թուրքիայի (Kaya v Turkey)* գործը, թիվ 22729/93, 19.2.98, (1999) 28 EHRR 1, կետ 107, *Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v Turkey)* գործը, թիվ 22495/93, 2.9.98, (1999) 28 EHRR 408, 114-115 կետեր:

⁴⁷ Տե՛ս, օրինակ, *Աքսոյն ընդդեմ Թուրքիայի (Aksoy v Turkey)* գործը, թիվ 21987/93, 18.12.96, (1997) 23 EHRR 553, կետ 98, *Կայան ընդդեմ Թուրքիայի (Kaya v Turkey)* գործը, թիվ 22729/93, 19.2.98, (1999) 28 EHRR 1, կետ 107, *Այդինն ընդդեմ Թուրքիայի (Ajdin v Turkey)* գործը, (1997) 25 EHRR 251, կետ 103, *Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v Turkey)* գործը, թիվ 22495/93, 2.9.98, (1999) 28 EHRR 408, *Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի (Tanrikulu v Turkey)* գործը, թիվ 26763/94, 8.7.99, կետ 117:

⁴⁸ Տե՛ս, օրինակ, *Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի (Velikova v Bulgaria)* գործը, թիվ 41488/98, 18.5.00, կետ 70, *Սալմանն ընդդեմ Թուրքիայի (Salman v Turkey)* գործը, թիվ 21986/93, 27.6.00, (2002) 34 EHRR 17, *Թանլին ընդդեմ Թուրքիայի (Tanli v Turkey)* գործը, թիվ 26129/95, 10.4.01, (2004) 38 EHRR 3, կետ 141, *Օրակն ընդդեմ Թուրքիայի (Orak v Turkey)* գործը, թիվ 31889/96, 14.2.02:

⁴⁹ Թիվ 21986/93, 27.6.00, (2002) 34 EHRR 17:

⁵⁰ Տե՛ս նույն տեղը 99 և 100 կետեր: Տե՛ս նաև *Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի (Velikova v Bulgaria)* գործը, թիվ 41488/98, 18.5.00:

⁵¹ Թիվ 26129/95, 10.4.01, (2004) 38 EHRR 3: Ի հակադրություն դրա, տես, *Դուգլաս-Ուիլիամսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Douglas-Williams v UK)* գործը, թիվ 56413/00, որոշում 8.1.02 (ոստիկանության կողմից կիրառված ուժը չի գնահատվել անհամաչափ կամ չափից ավելի ծանր):

եզրահանգումներ կամ անառարկելի համոզումներ»:⁵² *Անգուելովան ընդդեմ Բուլղարիայի (Anguelova v Bulgaria)* գործը⁵³, վերաբերում էր ոստիկանությունում կալանքի տակ գտնված 17-ամյա գնչուի՝ գանգոսկրի կոտրվածքի արդյունքում մահանալու դեպքին: Սա ոստիկանության կողմից ձերբակալվել էր գողություն կատարելու կասկածանքով: Մահվան պատճառների վերաբերյալ առկա էին իրարամերժ բժշկական փաստեր, սակայն Դատարանը մեծապես ուշադրություն դարձրեց այն փաստի վրա, որ ոստիկանությունն իրեն կասկածելի էր դրսևորում, օրինակ ձգձգում էր բժշկի հետ հանդիպումը և նենգափոխում էր ազատագրված վայրում կալանավորին վերաբերող փաստաթղթերը և գրառումները: Կառավարության առաջարկած վարկածն առ այն, որ մարդը վիրավորվել էր նախքան ձերբակալվելը, Դատարանը մերժեց՝ որպես հավատ չներշնչող: *Անգուելովի* գործում առկա էր 2-րդ հոդվածի առանձին խախտում՝ ժամանակին բժշկական օգնություն չցուցաբերելու հիմքով, որը մարդու մահվան առաջացման համար որոշիչ ազդեցություն էր ունեցել: Դատարանի համար հատկապես կարևոր էր այն, որ գործի նյութերը չէին պարունակում մարդու նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի ցուցաբերման փաստը հերքող որևէ ապացույց:

2-րդ հոդվածի իմաստով կյանքի իրավունքը պաշտպանելու պոզիտիվ պարտավորությունը նաև պահանջում է, որպեսզի ազատագրված վայրում գտնվող անձինքն պաշտպանված լինեն կալանավայրում պահվող այլ անձանց հարձակումներից: Դատարանն այս պարտավորությունը խախտված համարեց *Պոլ և Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Paul and Audrey Edwards v UK)* գործում⁵⁴: Դիմողի որդուն, Քրիստոֆեր Էդվարդսին, կալանքի տակ գտնվելու ընթացքում ծեծել և սպանել էր իր հետ նույն խցում պահվող վտանգավոր և հոգեկան հիվանդ Ռիչարդ Լինֆորդը: Դատարանը գտավ, որ բավարար տեղեկատվություն կա, որը ցույց է տալիս, որ սպանվածի հետ նույն խցում պահվող անձը շրջապատի համար իրական և լուրջ վտանգ էր ներկայացնում, ինչը սակայն ուշադրության չէր արժանացել բանտի վարչակազմի կողմից. այս տեղեկատվությունը տարբեր կերպ էր արտացոլվում ոստիկանության, դատախազության և մագիստրատների դատարանի արձանագրություններում: Դատարանը քննադատեց նաև Լինֆորդի գործով կատարված հապշտապ և մակերեսային քննությունը, ինչն իրականացվել էր ազատագրված վայրում ոչ պատշաճ կարգով ուսուցում անցած բուժաշխատողի կողմից և այն բազմաթիվ բացթողումները, որոնք առկա էին Քրիստոֆեր Էդվարդսի հանդեպ ցուցաբերված վերաբերմունքում՝ նրա ձերբակալման պահից մինչև նրան բանտախցում տեղավորելը, ինչպես նաև բանտախցում գտնվող ահազանգի կոճակը չվերանորոգելը:⁵⁵

Այն դեպքերում, երբ ձերբակալվածները ոստիկանության կամ անվտանգության մարմինների շենքերում չեն գտնվում, շարունակելով լինել ազատագրված, նրանց մահվան կապակցությամբ ողջամիտ բացատրություն ներկայացնելու պարտականությունը կրկին մնում է Կառավարության վրա: Դեմիրայն ընդդեմ Թուրքիայի (*Demiray v Turkey*) գործում⁵⁶, Կառավարության պնդումն այն էր, որ դիմողի ամուսնուն ժամդարմները տարել էին զինապահեստ, որտեղ նա սպանվել էր ՔԲԿ-ի կողմից տեղադրված թակարդ-ռումբի պայթյունից: Դատարանին չհաջողվեց պարզել կատարվածը, սակայն նա 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց (չնայած, որոշումը կայացրեց չորսն ընդդեմ երեքը ձայների հարաբերակցությամբ) այն հիմքով, որ պետությունը ձեռք չէր առել այնպիսի միջոցներ որոնք, ողջամտորեն, կարող էին կանխել գոյություն ունեցած վտանգը: Տարբերվող կարծիք հայտնած դատավորների տեսանկյունից որոշումն այնուամենայնիվ չափից ավելի ծանր պարտականություն է դնում պետության վրա:

⁵² Տե՛ս, օրինակ, *Սալմանն ընդդեմ Թուրքիայի (Salman v Turkey)* գործը, թիվ 21986/93, 27.6.00, (2002) 34 EHRR 17, կետ 100:

⁵³ Թիվ 38361/97, 13.6.02, (2004) 38 EHRR 31:

⁵⁴ Թիվ 46477/99, 14.3.02, (2002) 35 EHRR 19:

⁵⁵ Այս գործը դիմողի տեսանկյունից քննարկելու համար տես Օդրի Էդվարդս, «Չկա ճշմարտություն, չկա արդարադատություն», Ուոթերսայթ Պրեսս, 2002:

⁵⁶ Թիվ 27308/95, 21.11.00, կետ 46: Տե՛ս նաև *Օզալփը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ozalp and others v Turkey)* գործը, թիվ 32457/96, 8.4.04:

2-րդ հոդվածը կարող է բացառիկ դեպքերում վիճարկվել նաև, երբ անձի նկատմամբ ուժի գործադրումը մահվան չի հանգեցնում: Այս դեպքում 2-րդ հոդվածի կիրառելիությունը գնահատելիս դիտարկվում են գործադրված ուժի բնույթը և չափը, ինչպես նաև դրա կիրառման նախնական նպատակը:⁵⁷

7.2.3 Անհայտ կորելու դեպքեր

Հարկադիր «անհետացումները» Ռատարանն ի սկզբանե դիտարկում էր ավելի շուտ 5-րդ հոդվածի, քան թե 2-րդ կամ 3-րդ հոդվածների ներքո: *Քյուրթն ընդդեմ Թուրքիայի (Kurt v Turkey)* գործում⁵⁸ դիմողի որդուն վերջին անգամ տեսել էին զինվորների հետ միասին, որից հետո նրան չէին տեսել չորս և կես տարի: 2-րդ հոդվածի իմաստով, ենթադրյալ անօրինական սպանության փաստի կապակցությամբ արդյունավետ հետաքննություն անցկացնելու պոզիտիվ պարտավորության ծագման հարցը քննելիս, Ռատարանը հիմնվեց այն չափանիշի վրա, թե արդյոք առկա է «կոնկրետ ապացույց», որը ողջամիտ կասկածից վեր կհաստատի, որ դիմողի որդին սպանվել է իշխանությունների կողմից: *Քյուրթի* գործում այդպիսի ապացույց չկար, և հետևաբար Ռատարանը եզրակացրեց, որը գործը պետք է դիտարկվի 5-րդ և ոչ թե 2-րդ հոդվածի ներքո:

Այնուամենայնիվ, *Թիմուրթազն ընդդեմ Թուրքիայի (Timurtas v Turkey)* գործում⁵⁹, Ռատարանը 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց դիմողի որդու անհայտ կորելու կապակցությամբ, ով կալանավորվել էր անվտանգության ուժերի կողմից և նրա մասին այլևս ոչինչ հայտնի չէր եղել վեց և կես տարի⁶⁰: Գտնելով, որ անհայտ կորած լինելու ժամանակահատվածը դիտարկման ենթակա, սակայն ոչ որոշիչ հանգամանք է, Ռատարանը բավարարվեց նրանով, որ դիմողի որդին հնարավոր է որ մահացած լինի: *Թազն ընդդեմ Թուրքիայի (Tas v Turkey)* գործում⁶¹, եզրակացնելով, որ պետությունը պատասխանատու է դիմողի որդու հնարավոր մահվան համար, Ռատարանը «շատ լուրջ հետևություն» արեց նրան պահելու վայրի մասին որևէ փաստաթղթային ապացույցների բացակայության փաստից, ինչպես նաև այն հանգամանքից ելնելով, որ Կառավարությունը չկարողացավ ողջամիտ բացատրություն ներկայացնել առ այն թե ինչ էր պատահել նրա հետ:

«Անհայտ կորելու դեպքերի» կապակցությամբ պատշաճ հետաքննություն չանցկացնելը ևս կարող է 2-րդ հոդվածի խախտում առաջացնել (տե՛ս նաև ստորև 7.2.6 բաժինը), ինչպես որ եղավ *Թազի* գործում, որտեղ անցկացված հետաքննությունը գիտատվեց որպես դանդաղ, ոչ պատշաճ և անարդյունավետ⁶²: *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)* գործում⁶³ Ռատարանը 2-րդ հոդվածի շարունակական խախտում արձանագրեց իշխանությունների կողմից կյանքի համար սպառնալի հանգամանքներում անհայտ կորած հույն կիպրոսցիների գտնվելու վայրը և նրանց ճակատագիրը պարզելուն ուղղված արդյունավետ հետաքննություն չանցկացնելու հիմքով:

7.2.4 Ինքնասպանություններն ազատագրման վայրերում

⁵⁷ *Իլհանն ընդդեմ Թուրքիայի (Ilhan v Turkey)* գործը, թիվ 22277/93, 27.6.00, (2002) 34 EHRR 36, 75-76 կետեր, *Բերկթայն ընդդեմ Թուրքիայի (Berktaş v Turkey)* գործը, թիվ 22493/93, 1.3.01, 153-154 կետեր:

⁵⁸ Թիվ 24276/94, 25.5.98, (1999) 27 EHRR 373:

⁵⁹ Թիվ 23531/94, 13.6.00, (2001) 33 EHRR 6:

⁶⁰ Տե՛ս, նաև, *Չիչեկն ընդդեմ Թուրքիայի (Cicek v Turkey)* գործը, թիվ 25704/94, 27.2.01, (2003) 37 EHRR 20, *Աքենդիզն ընդդեմ Թուրքիայի (Akendiz v Turkey)* գործը, թիվ 3954/94, 31.5.01 (անվտանգության ուժերի կողմից ձերբակալվելուց հետո ավելի քան յոթ տարի բացակայած 11 մարդու ենթադրյալ մահը), *Բիլգինն ընդդեմ Թուրքիայի (Bilgin v Turkey)* գործը, թիվ 25659/94, 17.7.01, *Օրհանն ընդդեմ Թուրքիայի (Orhan v Turkey)* գործը, թիվ 25656/94, 18.6.02 (ավելի քան ութ տարի «անհայտանալը»), *Իպեկն ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey)* գործը, թիվ 25760/94, 17.2.04, (ավելի քան իննը և կես տարի «անհայտանալը»):

⁶¹ Թիվ 24396/94, 14.11.00, (2001) 33 EHRR 15, կետ 66:

⁶² Տե՛ս, նաև, *Աքենդիզն ընդդեմ Թուրքիայի (Akendiz v Turkey)* գործը, թիվ 3954/94, 31.5.01, 92-93 կետեր:

⁶³ Թիվ 25781/94, 10.5.01, (2002) 35 EHRR 38, կետ 136:

Իշխանությունները, 2-րդ հոդվածի իմաստով, պարտավոր են պատշաճ միջոցներ ձեռնարկել իրենց հսկողության ներքո գտնվող ազատագրված անձանց կյանքը պաշտպանելու համար, նույնիսկ այն դեպքերում, երբ մահը կամ վնասվածքները հետևանք են ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի: Կալանավորների ինքնասպանության դեպքում Դատարանը կիրառում է *Օսմանի* կրիտերիան (տե՛ս ստորև՝ 7.2.6-ը), որի էությունը կայանում է նրանում, թե արդյոք իշխանությունները գիտեին կամ պետք է իմանային, որ առկա է ինքնասպանության իրական և ուղղակի վտանգ, և եթե այո, ապա արդյոք նրանք արել են այն ամենը, ինչը ողջամտորեն սպասվում էր նրանցից, այդ վտանգը կանխելու համար:⁶⁴ *Կեենանի (Keenan)* գործում⁶⁵ Դատարանը բանտում դիմողի որդու ինքնասպանության առնչությամբ 2-րդ հոդվածի խախտում չարձանագրեց: Դատարանը եզրակացրեց, որ ընդհանուր առմամբ կալանավայրի վարչակազմը ողջամիտ վարքագիծ էր դրսևորել մահացածին ստացիոնար բժշկական օգնություն ցուցաբերելով, նրա նկատմամբ վերահսկողություն և ամենօրյա բժշկական հսկողություն սահմանելով այն ժամանակ, երբ թվացել էր, որ նա ցանկանում է ինքնասպան լինել: Այն փաստը, որ ահազանգի ազդանշանը չէր գործել, գնահատվեց որպես «դժբախտ պատահականություն», ինչը սակայն չէր նպաստել դիմողի որդու մահվանը: Տե՛ս նաև վերը՝ 7.2.2-ը, կապված կալանավորված անձին այլ կալանավորի կողմից սպանելու դեպքերի հետ:

7.2.5 Սահապատիժ

Հոդված 2-ի 1-ին մասն իր նախնական խմբագրությամբ թույլատրում էր մահապատժի կիրառումը, սակայն Կոնվենցիայի թիվ 6-րդ Արձանագրությունը (որն ուժի մեջ է մտել 1985 թվականի մարտի 1-ին) արգելեց մահապատժի կիրառումը խաղաղ ժամանակ, իսկ Արձանագրություն թիվ 13-ը (որն ուժի մեջ է մտել 2003 թվականի հուլիսի 1-ին) արգելեց մահապատժի կիրառումը բոլոր դեպքերում, ներառյալ նաև պատերազմի ժամանակ (ավելի մանրամասն տե՛ս ստորև, 7.3-ում): Ավելին, *Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v Turkey)* գործում⁶⁶ Դատարանը սահմանեց, որ Եվրոպայում տեղի ունեցած վերջին զարգացումների լույսի ներքո (Եվրոպայի խորհրդի անդամ երկրների տարածքն ընդգրկող տարածաշրջանում մահապատիժ չի կիրառվում) «կարելի է ասել, որ խաղաղ ժամանակ մահապատժի կիրառումը դարձել է պատասխանատվության անընդունելի, եթե ոչ անմարդկային ձև, որն այլևս թույլատրելի չէ 2-րդ հոդվածով»: Սա տեղի ունեցավ չնայած այն հանգամանքին, որ *Օջալանի* վճռի կայացման պահին, 41 անդամ երկրներից երեքը չէին վավերացրել թիվ 6 Արձանագրությունը: Եթե նույնիսկ մահապատժի կիրառումը թույլատրվեր, ապա դրա ի կատար ածումը, այն դեպքում, երբ մեղադրյալը զրկված է արդար դատաքննությունից, 2-րդ հոդվածի խախտում կառաջացնի:⁶⁷

7.2.6 Հանցագործությունից տուժողները (պետական և ոչ պետական մարմիններ), հանցագործությունները կանխելու և դրանց կապակցությամբ հետաքննություն անցկացնելու պարտավորությունները

Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող պոզիտիվ պարտավորությունը ներառում է ինչպես մահվան դեպքերը կանխելու (երբ իշխանությունները տեղեկություններ են ունեցել կոնկրետ իրադարձության կապակցությամբ, սակայն ողջամիտ միջոցներ ձեռք չեն առել այն կանխելու համար) այնպես էլ մահվան դեպքերի կապակցությամբ արդյունավետ հետաքննություն իրականացնելու պարտականությունները: *Օսմանն ընդդեմ Թուրքիայի (Osman v Turkey)* գործում⁶⁸ Դատարանը անդրադարձավ ուսուցչի կողմից իր նախկին

⁶⁴ *Կեենանն ընդդեմ Թուրքիայի (Keenan v Turkey)* գործը, թիվ 27229/95, 3.4.01, (2001) 33 EHRR 38, կետ 93:

⁶⁵ Տե՛ս նույն տեղը: Տե՛ս նաև *Թանրիբիլիրն ընդդեմ Թուրքիայի (Tanribilir v Turkey)* գործը, թիվ 21422/93, 16.11.00, *Յոնգերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Younger v UK)* գործը, թիվ 57420/00, որոշում 7.1.03, *Ա-ն և այլք ընդդեմ Թուրքիայի (A and others v Turkey)* գործը թիվ 30015/96, 27.7.04:

⁶⁶ Թիվ 46221/99, 12.3.03, (2003) 37 EHRR 10:

⁶⁷ *Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Ocalan v Turkey)* գործը, թիվ 46221/99, 12.3.03, (2003) 37 EHRR 10, կետ 204:

⁶⁸ Թիվ 23452/94, 28.2.98, (2000) 29 EHRR 10, կետ 204:

աշակերտի հոր, ունով նա տարված էր, սպանության հարցում պետության պոզիտիվ պարտավորության սահմաններին: Իրավախախտումները կանխելու և խափանելու իշխանությունների պարտավորության առնչությամբ, Դատարանը գտավ, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հաստատվի, որ իշխանությունները գիտեին կամ պետք է իմանային կոնկրետ անձի կյանքին երրորդ անձի կողմից հանցավոր ոտնձուխությունների կատարման իրական և ուղղակի վտանգի մասին, և իրենց իրավասությունների սահմաններում ձեռք չէին առել ողջամիտ միջոցներ որոնք կարող էին կանխել այդ վտանգը:⁶⁹ Դատարանը նշեց, որ այս պոզիտիվ պարտավորությունը չի կարող մեկնաբանվել, որպես իշխանությունների համար անհամաչափ կամ անհնարին պարտականության սահմանում: *Օսմանի* գործի փաստերից ելնելով, Դատարանը 2-րդ հոդվածի խախտում չարձանագրեց, քանի որ դիմողները չկարողացան մատնացույց անել սպանության համար որոշիչ դեր ունեցած իրադարձությունների ընթացքի որևէ հատված, որը թույլ կտար ասելու, որ ոստիկանությունը տեղյակ էր կամ պետք է իմանար Օսմանի ընտանիքի կյանքին սպառնացող իրական և ուղղակի վտանգի մասին:

Օսմանի գործում սահմանված չափանիշը կիրառելով հարավ-արևելյան Թուրքիայի համար, Դատարանը 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց *Մահմուդ Կայան ընդդեմ Թուրքիայի (Mahmut Kaya v Turkey)* գործում⁷⁰: տարածաշրջանում անվտանգության ուժերի գործողություններից արդյունավետ քրեաօրենսդրական պաշտանության բացակայության հիմքով, ինչը նշանակում էր, որ չէր կանխվել ՔԲԿ-ի վիրավոր անդամներին բժշկական օգնություն ցույց տալու մեջ կասկածվող բժշկի կյանքին սպառնացող իրական և ուղղակի վտանգը⁷¹: «Օսմանի չափանիշի» սահմաններն առավել խորն ուսումնասիրվեցին *Մաստրոմատտեո ընդդեմ Իտալիայի (Mastromatteo v Italy)* գործում⁷², որտեղ դիմողը 2-րդ հոդվածի հիման վրա բողոքում էր բանտից կարճատև արձակուրդ ուղարկված երկու անձանց կողմից իր որդու սպանության կապակցությամբ: Դիմողի որդին սպանվել էր, երբ այդ անձինք փախուստ էին կատարում բանկը կողոպտելուց հետո: Մեծ Պալատը գտավ, որ բանտարկյալներին հասարակություն վերադարձնելու Իտալական համակարգը 2-րդ հոդվածի ներքո խնդիր չի առաջացնում, և գործի հանգամանքներից երևում է, որ իշխանություններն այդ երկու անձանց ազատ արձակելիս գործել են ողջամտորեն. որևէ հիմք չկար ենթադրելու, որ նրանց ազատ արձակումը որևէ մեկի և մասնավորապես՝ դիմողի որդու, կյանքի համար իրական և ուղղակի վտանգ կստեղծի:

Մահվան դեպքերի կապակցությամբ հետաքննություն անցկացնելու պարտավորության բնույթը և սահմանները հստակեցվեցին 1990-ական թվականների կեսերին հարավ-արևելյան Թուրքիային վերաբերող մի շարք գործերում, որոնցում Ստրասբուրգի մարմինները եզրակացրեցին, որ իշխանությունները հետաքննություն չէին իրականացրել անվտանգության ուժերի սխալների վերաբերյալ բերված բողոքների կապակցությամբ, ինչի արդյունքում 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտումներ արձանագրվեցին: *Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի (Tanrikulu v Turkey)* գործում⁷³, օրինակ, Դատարանը 2-րդ հոդվածի խախտում արձանագրեց դիմողի ամուսնու սպանության հանգամանքների վերաբերյալ թուրքական իշխանությունների կողմից արդյունավետ հետաքննություն չանցկացնելու հիմքով: Դատարանը մատնանշեց Թուրքական քրեական օրենսդրությունում առկա մի շարք խնդիրներ: Նախ, պետական պաշտոնյաների կողմից ենթադրաբար կատարված իրավախախտումների վերաբերյալ հետաքննության իրականացումը ոչ թե հանրային դատախազի, այլ «վարչական խորհուրդների» իրավասության տակ էր գտնվում: Այս խորհուրդները կազմված էին քաղաքացիական ծառայողներից, ովքեր ենթարկվում էին կառավարչին, ում ենթակայության տակ էին այն անվտանգության ուժերը, որոնց գործողությունները քննության առարկա էին հանդիսանում: Դատարանը, համապատասխանաբար գտավ, որ վարչական խորհուրդները ոչ անկախ էին, և ոչ էլ արդյունավետ: Ավելին,

⁶⁹ Տե՛ս նույն տեղը, կետ 116:

⁷⁰ Թիվ 22535/93, 28.3.00:

⁷¹ Տե՛ս նաև, *Ակկոյն ընդդեմ Թուրքիայի (Akkoc v Turkey)* գործը, թիվ 22947/93 և թիվ 22948/93, 10.10.00, (2002) 34 EHRR 51:

⁷² Թիվ 37703/97, 24.10.02:

⁷³ Թիվ 26763/94, 8.7.99, (2000) 30 EHRR 950:

հետաքննությունը հաճախ իրականացնում էին ժանդարմները, ովքեր ստորադաս ենթակայության տակ էին գտնվում իրավախախտումը ենթադրաբար կատարած անվտանգության մարմիններից: Երկրորդ, Դատարանը մի շարք եզրակացություններ արեց անվտանգության ուժերի ենթադրյալ մասնակցությամբ կատարված իրավախախտումների կապակցությամբ իրականացված հետաքննությունների ոչ պատշաճ լինելու կապակցությամբ, երբ հանրային դատախազը հաճախ պատշաճ կարգով չէր ներկայացնում մեղադրանքը: Երրորդ, այդ իրավախախտումների համար պատասխանատվությունը հաճախ վերագրելով ՔԲԿ-ին, այդ գործերի ընդդատությունը փոխանցվել էր պետական անվտանգության դատարաններին, որոնք ինքնին անկախ չէին, դրանցում զինվորական դատավորի մասնակցության պատճառով:⁷⁴ Այս գործոցների առկայությունը նշանակում էր, որ բացակայում էր անվտանգության ուժերի հաշվետու լինելու հանգամանքը, ինչը Դատարանն անհամատեղելի համարեց իրավունքի գերակայության հետ:⁷⁵

Նաչովան ընդդեմ Բուլղարիայի (Nachova v Bulgaria) գործում⁷⁶, Դատարանն ընդգծեց, որ ռասիսզմի հիմքով բռնությունների կապակցությամբ հետաքննություն իրականացնելիս առավել խիստ պարտավորություններ են ծագում.

... երբ կասկած կա, որ բռնությունն արդյունք է ռասսայական անհանդուրժողականության, հատկապես կարևոր է եռանդով և անաչառ հետաքննության իրականացումը, նկատի ունենալով ռասսիզմի և էթնիկական ատելության հասարակության կողմից մերժված լինելն անընդհատ հաստատելու անհրաժեշտությունը և պահպանելու համար փոքրամասնությունների հավատն առ այն, որ իշխանություններն ունակ են պաշտպանելու իրենց ռասսիստական բռնությունից: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով պետության պոզիտիվ պարտավորությունների կատարումը պահանջում է, որ ներպետական իրավական համակարգը դրսևորի քրեական օրենքն այն անձանց նկատմամբ կիրառելու իր կարողությունը, ովքեր անօրինականորեն խլել են այլ մարդու կյանք, անկախ վերջինիս ռասսայական կամ էթնիկական պատկանելիությունից:⁷⁷

Ավելին, պետությունը պարտավոր է «գործի հանգամանքներից ելնելով ձեռք առնել բոլոր ողջամիտ միջոցները ապացույցները հավաքելու և ապահովելու համար, օգտագործել ճշմարտությունը բացահայտելու բոլոր գործնական միջոցները և կայացնել ամբողջությամբ հիմնավորված, անաչառ և օբյեկտիվ որոշումներ, առանց անտեսելու կասկածելի փաստերը, որոնք կարող են բնորոշել ռասսայական պատկանելիության հիմքով կատարված բռնությունը»⁷⁸: Նկատի ունենալով *Նաչովայի* գործում առկա լուրջ բացթողումները և անհամապատասխանությունները, ինչպես նաև *Վելիկովայի*⁷⁹ և *Անգուելովայի*⁸⁰ գործերում իր նմանատիպ եզրահանգումները, Դատարանը լուրջ կասկածներ արձանագրեց հետաքննիչների և հետաքննությանը մասնակցող դատախազների օբյեկտիվության և անաչառության կապակցությամբ:

Մահվան դեպքերի կապակցությամբ հետաքննություն անցկացնելու պարտավորությունը տարածվում է ոչ միայն այն դեպքերի վրա, երբ սպանությունը կատարել են պետական պաշտոնյաները, այլ նաև, երբ իշխանությունները տեղեկացվել են մահվան դեպքի վերաբերյալ:⁸¹ Պետք է նաև նշել, որ հետաքննություն անցկացնելու պարտավորությունը վերաբերում է հետաքննության միջոցներին, այլ ոչ թե դրա արդյունքին:⁸² Հետևաբար, իշխանությունները պետք է ողջամիտ քայլեր ձեռք առնեն

⁷⁴ *Ինքալն ընդդեմ Թուրքիայի (Incal v Turkey)* գործը, թիվ 22678/93, 9.6.98, (2000) 29 EHR 449:

⁷⁵ *Ակկոյն ընդդեմ Թուրքիայի (Akkoc v Turkey)* գործը, թիվ 22947/93 և թիվ 22948/93, 10.10.00, (2002) 34 EHR 51, 87-92 կետեր:

⁷⁶ Թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04 (2004) 39 EHR 37:

⁷⁷ Տե՛ս նույն տեղը, կետ 157: Տե՛ս նաև *Մենսոնը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Menson and others v UK)* գործը, թիվ 47916/99, որոշում 6.5.03:

⁷⁸ Տե՛ս նույն տեղը, կետ 159:

⁷⁹ Թիվ 41488/98, 18.5.00:

⁸⁰ Թիվ 38361/97, 13.6.02, (2004) 38 EHR 31:

⁸¹ Տե՛ս, օրինակ, *Էրգին ընդդեմ Թուրքիայի (Ergi v Turkey)* գործը, թիվ 23818/94, 28.7.98, (2001) 32 EHR 18, կետ 82, և *Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v Turkey)* գործը, թիվ 22495/93, 2.9.98, (1999) 28 EHR 408, կետ 100, *Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի (Tanrikulu v Turkey)* գործը, թիվ 26763/94, 8.7.99, (2000) 30 EHR 950, կետ 103, *Դեմիրայն ընդդեմ Թուրքիայի (Demiray v Turkey)* գործը, թիվ 27308/95, 9.11.00, կետ 404:

⁸² Տե՛ս, օրինակ, *Ավսարն ընդդեմ Թուրքիայի (Avsar v Turkey)* գործը, թիվ 25657/94, 10.7.01, (2003) 37 EHR 53, կետ 404:

համապատասխան ապացույցների հավաքումն ապահովելու համար (ներառյալ ականատես-վկաների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննության արդյունքները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դիախերձման իրականացումը) որպեսզի հետաքննությունը *հնարավորություն* ընձեռնի հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու իրավախախտումը կատարողներին: Հետաքննություն իրականացնողները գործով ներգրավված անձանցից պետք է ունենան ինչպես ենթակայական և գերատեսչական անկախություն, այնպես էլ «գործնական անկախություն»⁸³: Այն պահին, երբ իշխանությունները տեղեկացվում են մահվան դեպքի մասին, կամ այն որևէ այլ կերպ ներկայացվում է նրանց ուշադրությանը, իշխանությունները պարտավոր են հետաքննություն իրականացնել անկախ տուժողի իրավահաջորդի կողմից, որպես այդպիսին, պաշտոնական դիմում ներկայացնելու հանգամանքից:⁸⁴ Հետաքննություն իրականացնող մարմինները նաև պետք է գործեն ողջամիտ արագությամբ:⁸⁵ Ավելի մանրամասն տես ստորև 7.2.6.1՝ «Հետաքննության ընթացքում թույլ տրվող բնորոշ թերությունները» բաժնում:

Պարզ է, որ եթե սպանության մեջ կասկածվող անձը դատական կարգով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է, միշտ չէ որ հնարավոր է պնդել, որ իրականացված վարույթը հնարավորություն չի տվել հայտնաբերել և պատժել հանցագործներին: Այնուամենայնիվ, *Ավսարն ընդդեմ Թուրքիայի (Avsar v Turkey)* գործում⁸⁶, հետաքննության ոչ պատշաճ լինելու հիմքով 2-րդ հոդվածի խախտում արձանագրվեց, չնայած որ վեց «գյուղական պահակներ» դատապարտվել էին դիմողի եղբոր սպանության համար: Դրա պատճառն այն էր, որ իշխանությունները, այնուամենայնիվ, չէին անդրադարձել վճռորոշ այն հարցին, թե ինչ դեր է ունեցել այդ գործում անվտանգության ուժերի ներկայացուցիչ յոթերորդ մարդը:

Հյուսիսային Իռլանդիայից ներկայացված մի շարք գանգատներ բացահայտեցին Միացյալ Թագավորության հետաքննության համակարգում առկա որոշ անհամապատասխանություններ⁸⁷ (տե՛ս նաև ստորև՝ 7.2.6.1-ում): *Պոլ և Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Paul and Audrey Edwards v UK)* գործում⁸⁸, Դատարանը քննել այն հարցը, թե արդյոք բանտարկյալին իր հետ նույն խցում պահվող կալանավորի կողմից սպանելու կապակցությամբ իրականացված մասնավոր, ոչ պետական հետաքննությունը, համապատասխանում էր 2-րդ հոդվածի պահանջներին⁸⁹: Այդ հետաքննությունը իրականացնողը լսել էր բազմաթիվ վկաների, և 388 էջից բաղկացած զեկույց էր ներկայացրել, որը դատարանը նկարագրեց որպես «հանգամանալից փաստաթուղթ»: Դատարանը դիմողի որդու սպանությանը հանգեցրած բազմաթիվ թերություններ գտավ, և բարեփոխումների մի շարք առաջարկներ ներկայացրեց: Այնուամենայնիվ, այդ հետաքննությունը խախտել էր 2-րդ հոդվածի պահանջները, քանի որ իրավասություն չուներ պահանջելու վկաներին ներկայանալու ցուցմունքներ տալու համար: Այն նաև չէր ապահովում բավարար հանրային հսկողություն: Դատարանը գտավ, որ գործի բնույթը պահանջում էր «հնարավոր լայն լուսաբանում», մինչդեռ հետաքննությունն անց էր կացվել ոչ հրապարակային հիմունքներով, և նույնիսկ բողոք ներկայացրած անձինք դրան մասնակցելու հնարավորություն են ունեցել միայն այն երեք օրվա ընթացքում, երբ ներկայացել էին ցուցմունքներ տալու համար: Դիմողները ներկայացված չեն եղել, և հնարավորություն չեն ունեցել հարցաքննելու

⁸³ *Օգյուրն ընդդեմ Թուրքիայի (Ogur v Turkey)* գործը, թիվ 21954/93, 20.5.66, 91-92 կետեր:

⁸⁴ *Իլհանն ընդդեմ Թուրքիայի (Ilhan v Turkey)* գործը, թիվ 22277/93, 27.6.00, (2002) 34 EHRR 36, կետ 63:

⁸⁵ Տե՛ս, օրինակ, *Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v Turkey)* գործը, թիվ 22495/93, 2.9.98, (1999) 28 EHRR 408, 102-104 կետեր:

⁸⁶ Թիվ 25657/94, 10.7.01, (2003) 37 EHRR 53:

⁸⁷ *Հորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK)* գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHRR 2, *ՄքԷրն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK)* գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHRR 20, *Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK)* գործը, թիվ 30054/96, 4.5.01, *Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK)* գործը, թիվ 37715/97, 4.5.01, *ՄքՇանն ընդդեմ Միացյալ Թագավորության (McShane v UK)* գործը, թիվ 43290/98, 28.5.02, (2002) 35 EHRR 23: Տե՛ս, նաև, Ֆ. Նի Աոլաին, «Ճշմարտությունն ասելը, Հաշվետու լինելը և Կյանքի Իրավունքը Հյուսիսային Իռլանդիայում», [2002] EHRLR 572:

⁸⁸ Թիվ 46477/99, 14.03.02, (2002) 35 EHRR 19:

⁸⁹ Հետաքննություն չէր իրականացվել, և քանի որ մեղադրյալն իրեն մեղավոր էր ճանաչել սպանություն կատարելու մեջ, վկաների հարցաքննություն ներառող քրեական վարույթ չէր իրականացվել:

վկաներին. հետևաբար նրանք գործընթացին ներգրավված չեն եղել այն չափով, որն անհրաժեշտ էր իրենց շահերը պաշտպանելու համար:

7.2.6.1 Հետաքննությունների ընթացքում թույլ տրվող սպեցիֆիկ թերությունները

Ստորև բերված են քրեական հետաքննության որոշ ասպեկտների սպեցիֆիկ թերությունները մատնանշող Դատարանի եզրահանգումները.

Դեպքի վայրը

- դեպքի վայրը չգնալը⁹⁰
- դեպքի վայրում իրեղեն ապացույցները չպահպանելը⁹¹
- դեպքի վայրում հայտնաբերված զենքերը⁹² չլուսանկարելը⁹³
- դեպքի վայրի պատշաճ նկարագրություն չկազմելը⁹⁴
- չափագրումներ չկատարելը⁹⁵
- քննչական փորձարարություն չկատարելը⁹⁶
- հայտնաբերված պարկուճների քանակը կամ դրանց գտնվելու վայրը չարձանագրելը⁹⁷
- ձգաբանական փորձաքննություն չնշանակելը կամ այն ուշացմամբ իրականացնելը⁹⁸
- կրակված զնդակները չգտնելը⁹⁹
- մեկ պարկուճի և երկու հրազենի հնարավոր առկայության մասին պատշաճ արձանագրություն չկազմելը¹⁰⁰
- տուժողի մարմնի և հագուստի դատաբժշկական փորձաքննություն չիրականացնելը¹⁰¹
- տուժողի և հրազենի միջև կապը պարզելու նպատակով նրա ձեռքերի վրայի հետքերի ուսումնասիրություն չիրականացնելը¹⁰²
- հրազենի վրա մատնահետքեր հայտնաբերելու նպատակով փորձաքննություն չիրականացնելը¹⁰³:

Դիակերծում և դիագնոստ

⁹⁰ *Դեմիրայն ընդդեմ Թուրքիայի (Demiray v Turkey)* գործը, թիվ 27308/95, 21.11.00, *Իպեկն ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey)* գործը, թիվ 25760/94, 17.2.04:

⁹¹ *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v Bulgaria)* գործը, թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04, (2004) 39 EHRR 37, կետ 132, *Նուրայ Սենն ընդդեմ Թուրքիայի (Nuray Sen v Turkey)* գործը, (Թիվ 2) թիվ 25354/94, 30.3.04:

⁹² *Օնենն ընդդեմ Թուրքիայի (Onen v Turkey)* գործը, թիվ 22876/93, 14.5.02:

⁹³ *Գյուլն ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHRR 28:

⁹⁴ *Օնենն ընդդեմ Թուրքիայի (Onen v Turkey)* գործը, թիվ 22876/93, 14.5.02, *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v Bulgaria)* գործը, թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04, (2004) 39 EHRR 37, կետ 133:

⁹⁵ *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v Bulgaria)* գործը, թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04, (2004) 39 EHRR 37, կետ 132:

⁹⁶ Տե՛ս նույն տեղը 133-134 կետերը:

⁹⁷ *Օնենն ընդդեմ Թուրքիայի (Onen v Turkey)* գործը, թիվ 22876/93, 14.5.02:

⁹⁸ *Նուրայ Սենն ընդդեմ Թուրքիայի (Nuray Sen v Turkey)* գործը, (Թիվ 2) թիվ 25354/94, 30.3.04, *Չենգինն ընդդեմ Թուրքիայի (Zengin v Turkey)* գործը, թիվ 46928/99, 28.10.04:

⁹⁹ *Գյուլն ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHRR 28, *Նուրայ Սենն ընդդեմ Թուրքիայի (Nuray Sen v Turkey)* գործը, (Թիվ 2) թիվ 25354/94, 30.3.04:

¹⁰⁰ *Գյուլն ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHRR 28:

¹⁰¹ *Նուրայ Սենն ընդդեմ Թուրքիայի (Nuray Sen v Turkey)* գործը, (Թիվ 2) թիվ 25354/94, 30.3.04:

¹⁰² *Գյուլն ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHRR 28:

¹⁰³ Տե՛ս նույն տեղը:

- որոշակի տվյալներ պարզելու համար դիտարկում չիրականացնելը ¹⁰⁴
- դիագնոզման էական բացթողումները (դիտարկումը պետք է «ամբողջական և մանրամասն տեղեկություններ պարունակի վատ վերաբերմունքի ցուցաբերման և վնասվածքների հնարավոր նշանների մասին, և պարունակի բժշկական օբյեկտիվ եզրահանգումներ, այդ թվում նաև մահվան պատճառի վերաբերյալ») ¹⁰⁵
- դիտարկման իրականացումը թերապևտի կողմից ¹⁰⁶:

Վկաների նկատմամբ վերաբերմունքը

- ականատես վկայից կամ այլ կարևոր վկայից բավարար ցունցունքները չվերցնելը ¹⁰⁷
- ոստիկանության, անվտանգության ուժերի ներկայացուցիչների և պետական պաշտոնյաների ոչ պատշաճ հարցաքննությունը ¹⁰⁸
- միայն համառոտ ցուցմունքներ վերցնելը ¹⁰⁹
- ցուցմունքներն ուշացումով վերցնելը ¹¹⁰
- կասկածյալի լուսանկարը դիմողին ցույց չտալը և պաշտոնական առերեսում չանցկացնելը ¹¹¹
- խնդրո առարկա միջադեպում ներգրավված մարմնի ներկայացուցչի կողմից հարցաքննություն անցկացնելը ¹¹²:

Հետաքննությունն ընդհանուր առմամբ

- ոստիկանության բաժանմունքում մահվան դեպքի մասին ոստիկանության կողմից իրավասու մարմնին չտեղեկացնելը ¹¹³
- պաշտոնական հետաքննությունն ուշացմամբ սկսելը ¹¹⁴
- իրենց գործողությունների համար պատշաճ կերպով հաշվետու լինելու պահանջ անվտանգության ուժերին չներկայացնելը ¹¹⁵, կամ այն ենթադրությունը, որ անվտանգության ուժերը մեղավոր չէին ¹¹⁶

¹⁰⁴ Անգուելովան ընդդեմ Բուլղարիայի (*Anguelova v Bulgaria*) գործը, թիվ 38361/97, 13.6.02, (2004) 38 EHRR 31, *Թեփեն ընդդեմ Թուրքիայի (Tepe V Turkey)* գործը, թիվ 27244/95, 9.5.03:

¹⁰⁵ Թանլին ընդդեմ Թուրքիայի (*Tanlı v Turkey*) գործը, թիվ 26129/95, 10.4.01, (2004) 38 EHRR 3, կետ 149:

¹⁰⁶ Դեմիրայն ընդդեմ Թուրքիայի (*Demiray v Turkey*) գործը, թիվ 27308/95, 21.11.00:

¹⁰⁷ Օնենն ընդդեմ Թուրքիայի (*Onen v Turkey*) գործը, թիվ 22876/93, 14.5.02, *Օրհանն ընդդեմ Թուրքիայի (Orhan v Turkey)* գործը, թիվ 25656/94, 18.6.02, *Թեփեն ընդդեմ Թուրքիայի (Tepe V Turkey)* գործը, թիվ 27244/95, 9.5.03, *Թեգդագն ընդդեմ Թուրքիայի (Tekdag v Turkey)* գործը, թիվ 27699/95, 15.1.04, *Իպեկն ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey)* գործը, թիվ 25760/94, 17.2.04, *Նուրայ Սենն ընդդեմ Թուրքիայի (Nuray Sen v Turkey)* գործը, (Թիվ 2) թիվ 25354/94, 30.3.04, *Ահմետ Օզկանը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ahmet Ozkan and others v Turkey)* գործը, թիվ 21689/93, 6.4.04, *Թահսին Ասարն ընդդեմ Թուրքիայի (Tahsin Acar v Turkey)* գործը, թիվ 26307/95, 8.4.04, (2004) 38 EHRR 2, *Օզալփը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ozalp and others v Turkey)* գործը, թիվ 32457/96, 8.4.04:

¹⁰⁸ Օնենն ընդդեմ Թուրքիայի (*Onen v Turkey*) գործը, թիվ 22876/93, 14.5.02, *Անգուելովան ընդդեմ Բուլղարիայի (Anguelova v Bulgaria)* գործը, թիվ 38361/97, 13.6.02, (2004) 38 EHRR 31, *Դեմիրայն ընդդեմ Թուրքիայի (Demiray v Turkey)* գործը, թիվ 27308/95, 21.11.00, *Աքտաշ ընդդեմ Թուրքիայի (Aktas v Turkey)* գործը, թիվ 24351/94, 24.4.03, (2004) 38 EHRR 18, *Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v Bulgaria)* գործը, թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04, (2004) 39 EHRR 37, կետ 135, *Ահմետ Օզկանը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ahmet Ozkan and others v Turkey)* գործը, թիվ 21689/93, 6.4.04, *Օզալփը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ozalp and others v Turkey)* գործը, թիվ 32457/96, 8.4.04:

¹⁰⁹ *Օրհանն ընդդեմ Թուրքիայի (Orhan v Turkey)* գործը, թիվ 25656/94, 18.6.02:

¹¹⁰ *Օրակն ընդդեմ Թուրքիայի (Orak v Turkey)* գործը, թիվ 31889/96, 14.2.02, *Օրհանն ընդդեմ Թուրքիայի (Orhan v Turkey)* գործը, թիվ 25656/94, 18.6.02:

¹¹¹ *Օնենն ընդդեմ Թուրքիայի (Onen v Turkey)* գործը, թիվ 22876/93, 14.5.02:

¹¹² *Աքտաշ ընդդեմ Թուրքիայի (Aktas v Turkey)* գործը, թիվ 24351/94, 24.4.03, (2004) 38 EHRR 18:

¹¹³ Տե՛ս նույն տեղը:

¹¹⁴ *Չիչեկն ընդդեմ Թուրքիայի (Cicek v Turkey)* գործը, թիվ 25704/94, 27.2.01, (2003) 37 EHRR 20:

¹¹⁵ Տե՛ս նույն տեղը, *Իպեկն ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey)* գործը, թիվ 25760/94, 17.2.04:

¹¹⁶ *Օնենն ընդդեմ Թուրքիայի (Onen v Turkey)* գործը, թիվ 22876/93, 14.5.02, *Ահմետ Օզկանը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Ahmet Ozkan and others v Turkey)* գործը, թիվ 21689/93, 6.4.04:

- անվտանգության ուժերի գաղտնի գործունեություն իրականացնելու մեղադրանքների վերաբերյալ պատշաճ կամ արդյունավետ հետաքննություն չանցկացնելը¹¹⁷
- հետաքննություն իրականացնող պաշտոնյաների անկախությունն այն անձանցից, ուն նկատմամբ իրականացվում է հետաքննությունը¹¹⁸
- ոստիկանության և դատախազության կողմից հետաքննությունը պատշաճ կերպով չհամակարգելը¹¹⁹
- հետաքննությունը ողջամիտ ժամկետում չիրականացնելը¹²⁰
- ոչ օբյեկտիվ և ոչ լրիվ հետաքննություն անցկացնելը¹²¹
- կարճ և թռուցիկ հետաքննությունը¹²² կամ անհրաժեշտ տեղեկատվությունն անտեսելը¹²³
- սահմանափակ շրջանակներով և/կամ կարճատև հետաքննությունը¹²⁴
- կարևոր նշանակություն ունեցող ապացույցը կամ փաստաթուղթը ձեռք չբերելը¹²⁵
- Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «բացարձակապես անհրաժեշտ» չափանիշին չհամապատասխանող հետաքննությունը¹²⁶
- ձերբակալման արձանագրություններում նշված տեղեկություններից բացի այլ տեղեկատվություն չհավաքելը¹²⁷
- կալանավորի մահվան և ազատագրվման վայրում նրա նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի միջև պատճառահետևանքային կապի առկայության պարզմանն ուղղված քննություն չանցկացնելը¹²⁸
- հետաքննության իրականացումը «Վարչական խորհրդի» կողմից, որը անկախ չէր այն անվտանգության ուժերից, որոնց նկատմամբ իրականացվում էր հետաքննությունը¹²⁹
- անհայտ կորած անձանց լուսանկարները ձեռք չբերելը¹³⁰

¹¹⁷ Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Shanaghan v UK*) գործը, թիվ 37715/97, 4.5.01:

¹¹⁸ Չորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Jordan v UK*) գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHRR 2, Մքթերն ընդդեմ Միացյալ Թագավորության (*McKerr v UK*) գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHRR 20, Էլլին ընդդեմ Միացյալ Թագավորության (*Kelly v UK*) գործը, թիվ 30054/96, 4.5.01, Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Shanaghan v UK*) գործը, թիվ 37715/97, 4.5.01, Մքշանն ընդդեմ Միացյալ Թագավորության (*McShane v UK*) գործը, թիվ 43290/98, 28.5.02, (2002) 35 EHRR 23, Աքտաշ ընդդեմ Թուրքիայի (*Aktas v Turkey*) գործը, թիվ 24351/94, 24.4.03, (2004) 38 EHRR 18, Ֆինուքեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Finucane v UK*) գործը, թիվ 29178/95, 1.7.03, (2003) 37 EHRR 29, Իպեկն ընդդեմ Թուրքիայի (*Ipek v Turkey*) գործը, թիվ 25760/94, 17.2.04:

¹¹⁹ Թեփեն ընդդեմ Թուրքիայի (*Tepe v Turkey*) գործը, թիվ 27244/95, 9.5.03, Թեգդագն ընդդեմ Թուրքիայի (*Tekdag v Turkey*) գործը, թիվ 27699/95, 15.1.04, Նուրայ Սենն ընդդեմ Թուրքիայի (*Nuray Sen v Turkey*) գործը, (Թիվ 2) թիվ 25354/94, 30.3.04, Թահսին Ասարն ընդդեմ Թուրքիայի (*Tahsin Acar v Turkey*) գործը, թիվ 26307/95, 8.4.04, (2004) 38 EHRR 2, Բուլդան ընդդեմ Թուրքիայի (*Buldan v Turkey*) գործը, թիվ 28298/95, 20.4.04:

¹²⁰ Մքթերն ընդդեմ Միացյալ Թագավորության (*McKerr v UK*) գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHRR 20, Մքշանն ընդդեմ Միացյալ Թագավորության (*McShane v UK*) գործը, թիվ 43290/98, 28.5.02, (2002) 35 EHRR 23, Թահսին Ասարն ընդդեմ Թուրքիայի (*Tahsin Acar v Turkey*) գործը, թիվ 26307/95, 8.4.04, (2004) 38 EHRR 2, Բուլդան ընդդեմ Թուրքիայի (*Buldan v Turkey*) գործը, թիվ 28298/95, 20.4.04:

¹²¹ Անգուելովան ընդդեմ Բուլղարիայի (*Anguelova v Bulgaria*) գործը, թիվ 38361/97, 13.6.02, (2004) 38 EHRR 31:

¹²² Օրհանն ընդդեմ Թուրքիայի (*Orhan v Turkey*) գործը, թիվ 25656/94, 18.6.02:

¹²³ Չիչեկն ընդդեմ Թուրքիայի (*Cicek v Turkey*) գործը, թիվ 25704/94, 27.2.01, (2003) 37 EHRR 20:

¹²⁴ Ակկոյն ընդդեմ Թուրքիայի (*Akkoc v Turkey*) գործը, թիվ 22947/93 և թիվ 22948/93, 10.10.00, (2002) 34 EHRR 51, Թեգդագն ընդդեմ Թուրքիայի (*Tekdag v Turkey*) գործը, թիվ 27699/95, 15.1.04, Իպեկն ընդդեմ Թուրքիայի (*Ipek v Turkey*) գործը, թիվ 25760/94, 17.2.04, Բուլդան ընդդեմ Թուրքիայի (*Buldan v Turkey*) գործը, թիվ 28298/95, 20.4.04:

¹²⁵ Թահսին Ասարն ընդդեմ Թուրքիայի (*Tahsin Acar v Turkey*) գործը, թիվ 26307/95, 8.4.04, (2004) 38 EHRR 2, Բուլդան ընդդեմ Թուրքիայի (*Buldan v Turkey*) գործը, թիվ 28298/95, 20.4.04:

¹²⁶ Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (*Nachova and others v Bulgaria*) գործը, թիվ 43577/98 և թիվ 43579/98, 26.2.04, (2004) 39 EHRR 37:

¹²⁷ Օրհանն ընդդեմ Թուրքիայի (*Orhan v Turkey*) գործը, թիվ 25656/94, 18.6.02, Իպեկն ընդդեմ Թուրքիայի (*Ipek v Turkey*) գործը, թիվ 25760/94, 17.2.04:

¹²⁸ Ահմետ Օզկանը և այլոք ընդդեմ Թուրքիայի (*Ahmet Ozkan and others v Turkey*) գործը, թիվ 21689/93, 6.4.04:

¹²⁹ Օրհանն ընդդեմ Թուրքիայի (*Orhan v Turkey*) գործը, թիվ 25656/94, Աքտաշ ընդդեմ Թուրքիայի (*Aktas v Turkey*) գործը, թիվ 24351/94, 24.4.03, (2004) 38 EHRR 18, 18.6.02, Իպեկն ընդդեմ Թուրքիայի (*Ipek v Turkey*) գործը, թիվ 25760/94, 17.2.04, Օզալփը և այլոք ընդդեմ Թուրքիայի (*Ozalp and others v Turkey*) գործը, թիվ 32457/96, 8.4.04:

¹³⁰ Օրհանն ընդդեմ Թուրքիայի (*Orhan v Turkey*) գործը, թիվ 25656/94, 18.6.02:

- դիմողին հետաքննության ընթացքի կամ կայացված որոշումների մասին տեղյակ չպահելը¹³¹
- միմյանց հետ հնարավոր կապ ունեցող սպանությունների միջև կապերը չբացահայտելը¹³²
- պաշտոնյաների կողմից իրենց կցված հրազենի վերաբերյալ հաշվետու չլինելը¹³³:

Հետաքննությունը և քննչական գործողություններ

- հետաքննությունը անհապաղ և/կամ ոչ բավարար արագությամբ սկսելը¹³⁴
- հիմնական վկաներին ցուցումներ տալու համար ներկայանալ հարկադրելու անհարինությունը¹³⁵
- տուժողի ընտանիքին իրավաբանական օգնություն չցուցաբերելը¹³⁶
- տուժողի մահվան պատճառները պարզելուն ուղղված հետաքննությանը նրա զուգընկերոջ մասնակցության անհնարինությունը¹³⁷
- տուժողի ընտանիքին վկաների ցուցումներին հետ չծանոթացնելը¹³⁸
- Հանրային շահով պայմանավորված անձեռնմխելիությունը, որը խոչընդոտել է գործի հետ կապ ունեցող հանգամանքների հետաքննությունը¹³⁹
- հետաքննությունը, որը հնարավորություն չէր տալիս հանգելու եզրակացության կամ եզրահանգման, ինչը կարող էր արդյունավետ նշանակություն ունենալ մեղադրանքի հաստատման համար¹⁴⁰
- հետաքննության շրջանակները չափազանց նեղ են¹⁴¹
- հանրային վերահսկողության բացակայությունը¹⁴²

Դատախազական մարմիններ

¹³¹ Տե՛ս նույն տեղը:

¹³² *Էկինցին ընդդեմ Թուրքիայի (Ekinici v Turkey)* գործը, թիվ 27602/95, 16.7.02:

¹³³ *Գյուլն ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHR 28:

¹³⁴ *Յորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK)* գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHR 2, *Մքբերն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK)* գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHR 20, *Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK)* գործը, թիվ 30054/96, 4.5.01, *Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK)* գործը, թիվ 37715/97, 4.5.01, *ՄքՇանն ընդդեմ Միացյալ Թագավորության (McShane v UK)* գործը, թիվ 43290/98, 28.5.02, (2002) 35 EHR 23, *Ֆինուքեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Finucane v UK)* գործը, թիվ 29178/95, 1.7.03, (2003) 37 EHR 29:

¹³⁵ *Յորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK)* գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHR 2, *Մքբերն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK)* գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHR 20, *Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK)* գործը, թիվ 30054/96, 4.5.01, *ՄքՇանն ընդդեմ Միացյալ Թագավորության (McShane v UK)* գործը, թիվ 43290/98, 28.5.02, (2002) 35 EHR 23, *Փոլ և Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Paul and Audrey Edwards v UK)* գործը, թիվ 46477/99, 14.3.02, (2002) 35 EHR 19:

¹³⁶ *Յորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK)* գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHR 2:

¹³⁷ *Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի (Slimani v France)* գործը, թիվ 57671/00, 27.7.04:

¹³⁸ *Յորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK)* գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHR 2, *Մքբերն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK)* գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHR 20, *Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK)* գործը, թիվ 30054/96, 4.5.01, *Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK)* գործը, թիվ 37715/97, 4.5.01:

¹³⁹ *Մքբերն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK)* գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHR 20:

¹⁴⁰ *Յորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK)* գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHR 2, *Մքբերն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK)* գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHR 20, *Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK)* գործը, թիվ 30054/96, 4.5.01, *Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK)* գործը, թիվ 37715/97, 4.5.01, *ՄքՇանն ընդդեմ Միացյալ Թագավորության (McShane v UK)* գործը, թիվ 43290/98, 28.5.02, (2002) 35 EHR 23:

¹⁴¹ *Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK)* գործը, թիվ 37715/97, 4.5.01, *Ֆինուքեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Finucane v UK)* գործը, թիվ 29178/95, 1.7.03, (2003) 37 EHR 29 (երկու գործերում էլ՝ անվտանգության ուժերի գաղտնի համագործակցության մեղադրանքների վերաբերյալ հետաքննության կանխում):

¹⁴² *Փոլ և Օդրի Էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Paul and Audrey Edwards v UK)* գործը, թիվ 46477/99, 14.3.02, (2002) 35 EHR 19, *Ֆինուքեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Finucane v UK)* գործը, թիվ 29178/95, 1.7.03, (2003) 37 EHR 29:

- դատախազի կողմից գործում ներգրավված անձանցից (ներառյալ դիմողից) ցուցմունքներ չվերցնելը¹⁴³
- դատախազի կողմից բանտային արձանագրությունները կամ ազատազրկման վայրերը չստուգելը¹⁴⁴
- դատախազի կողմից մահվան «պաշտոնական վարկածը» կասկածի տակ չդնելը¹⁴⁵
- անբավարար ապացույցների հիման վրա դատախազի կողմից հապճեպ եզրահանգումներ կայացնելը¹⁴⁶
- ոստիկանության ծառայողների նկատմամբ հետաքննություն չանցկացնելու մասին դատախազական մարմինների որոշման հիմքերի չհրապարակումը (և տուժողի ընտանիքին տեղեկատվություն չտրամադրելը)¹⁴⁷:

Այլ ասպեկտներ

- ոստիկանության ծառայողներին ներպետական դատարանների արդարացնող դատավճիռների ոչ բավարար հիմնավորվածությունը¹⁴⁸:

7.2.7 Շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող գործեր

2-րդ հոդվածով սահմանված կյանքը պաշտպանելու պետության պարտականությունը վերաբերում է նաև կյանքի համար վտանգ ներկայացնող շրջակա միջավայրի աղտոտումներին վերաբերող գործերին: Որոշելու համար, թե 2-րդ հոդվածի իմաստով ինչիսիսի պոզիտիվ քայլեր պետք է ձեռք առնվեն, Դատարանը գնահատում է, թե արդյոք «պետությունն արել է այն ամենը, ինչ իրենից պահանջվում է ... կյանքի համար վտանգի առաջացումից խուսափելու համար»¹⁴⁹: 2-րդ հոդվածը նախատեսում է վտանգի գոտում գտնվող անձանց տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու, և նրանց առողջական վիճակը վերահսկելու կամ համապատասխան կարգավորումներ սահմանելու պարտականություն¹⁵⁰: Հետևաբար, 2-րդ հոդվածը կարող է վիճարկվել նույնիսկ, երբ մահվան դեպքերը բացակայում են: Այնուամենայնիվ, բնապահպանական լուրջ աղտոտումներին վերաբերող գործերն ավելի շատ քննվում են 8-րդ, քան թե 2-րդ հոդվածի ներքո (տե՛ս, ստորև՝ 7.9.11-ում, և, օրինակ, *Գուերրան և այլոք ընդդեմ Իտալիայի (Guerra and others v Italy)* գործը)¹⁵¹:

Օներիլդիզը ընդդեմ Թուրքիայի (Önerildiz v Turkey) գործում¹⁵², դիմողը, ում տուևը կառուցված էր ետնախորշերում, աղբանոցի մոտ, մեթան գազի պայթյունի հետևանքով, որը 11 տուն ավերեց, կորցրեց իր ընտանիքի ինը անդամներին: Մեծ Պալատը 2-րդ հոդվածի խախտում արձանագրելով (միաձայն)¹⁵³, պատճառահետևանքային կապ գտավ

¹⁴³ *Գյուլը ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHRR 28, Իպեկն ընդդեմ Թուրքիայի (Ipek v Turkey) գործը, թիվ 25760/94, 17.2.04:

¹⁴⁴ *Չիչեկն ընդդեմ Թուրքիայի (Cicek v Turkey)* գործը, թիվ 25704/94, 27.2.01, (2003) 37 EHRR 20:

¹⁴⁵ Օրակն ընդդեմ Թուրքիայի (Orak v Turkey) գործը, թիվ 31889/96, 14.2.02:

¹⁴⁶ Դեմիրայն ընդդեմ Թուրքիայի (Demiray v Turkey) գործը, թիվ 27308/95, 21.11.00:

¹⁴⁷ *Հորդանանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Jordan v UK)* գործը, թիվ 24746/94, 4.5.01, (2003) 37 EHRR 2, *Մքբերն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKerr v UK)* գործը, թիվ 28883/95, 4.5.01, (2002) 34 EHRR 20, *Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Kelly v UK)* գործը, թիվ 30054/96, 4.5.01, Շանագհանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Shanaghan v UK) գործը, թիվ 37715/97, 4.5.01, Ֆինուքեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Finucane v UK) գործը, թիվ 29178/95, 1.7.03, (2003) 37 EHRR 29:

¹⁴⁸ *Գյուլը ընդդեմ Թուրքիայի (Gul v Turkey)* գործը, թիվ 22676/93, 14.12.00, (2002) 34 EHRR 28:

¹⁴⁹ *LUF-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (LCB v UK)* գործը, թիվ 23413/94, 9.6.98, (1999) 27 EHRR 212, կետ 36:

¹⁵⁰ Տե՛ս նույն տեղը, կետ 38, իսկ կարգավորումների կապակցությամբ, տե՛ս, *Օներիլդիզը ընդդեմ Թուրքիայի (Önerildiz v Turkey)* գործը, թիվ 48939/99, 30.11.04, կետ 90:

¹⁵¹ Թիվ 14967/89, 19.2.98, (1998) 26 EHRR 357:

¹⁵² Թիվ 48939/99, 30.11.04:

¹⁵³ Մեծ Պալատը նաև 15-ն ընդդեմ երկուսի ձայների հարաբերակցությամբ 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում արձանագրեց:

միջադեպի և մի շարք իրավասու տեղական իշխանությունների անգործության միջև: Այդ իշխանությունները գիտեին, կամ պետք է իմանային, որ այդ ետնախորշերի բնակիչները կանգնած էին (մեթան գազի պայթյունի) իրական վտանգի առջև, և ձեռք չէին առել իրավիճակը շտկելուն ուղղված իրենցից կախված բոլոր ողջամիտ քայլերը: Դատարանը քննադատեց նաև իշխանությունների կողմից բնակիչներին վտանգի մասին չտեղեկացնելու հանգամանքը: Չնայած միջադեպի կապակցությամբ վարչական և քրեական վարույթներ էին հարուցվել, դրանք քննության առարկա չէին դարձրել կյանքի իրավունքի խախտման հարցը, և հանգեցրել էին միայն երկու քաղաքապետերին անգործության համար տուգանելուն:

7.2.8 Առողջապահություն, հղիության արհեստական ընդհատում, էֆթանագիա և ինքնասպանությանն օժանդակելը

2-րդ հոդվածի շրջանակներում կարող են արժարծվել բժշկական օգնության տրամադրման ոլորտում կյանքը պաշտպանելու համար պատշաճ միջոցներ ձեռք առնելու պարտավորության շրջանակների հարցը¹⁵⁴: Պայմանավորված առողջապահության սահմանափակ ֆինանսավորման բարդություններով, ենթադրվում է, որ Դատարանը միայն բացառիկ դեպքերում 2-րդ հոդվածի խախտում կարձանագրի կապված պատշաճ բժշկական օգնություն չցուցաբերելու հետ: Այնուամենայնիվ, բժշկական օգնություն ցուցաբերելիս խտրականության դրսևորումը կարող է 2-րդ հոդվածի խախտում առաջացնել, ինչպես Դատարանը հաստատեց *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey)* գործում¹⁵⁵, սահմանելով, որ 2-րդ հոդվածի հետ կապված խնդիր կարող է ծագել, «երբ պարզվում է, որ պայմանավորվող պետության իշխանությունները անձին կյանքը վտանգի են ենթարկել նրան այնպիսի բժշկական օգնության ցուցաբերումը մերժելով, ինչը մատչելի էր բնակչության համար ընդհանրապես»: Ինչևէ, *Նիտեցկին ընդդեմ Լեհաստանի (Nitecki v Poland)* գործում¹⁵⁶, որտեղ իշխանությունները վճարել էին դիմողի կյանքը փրկելու համար պահանջվող դեղերի արժեքի միայն 70 %-ը, ինչը նշանակում էր, որ դիմողը պետք է վճարեր մնացած գումարը, 2-րդ հոդվածի խախտում չարձանագրվեց:

Պաուելն ընդդեմ Միացյալ Թագավորության (Powell v UK) գործով¹⁵⁷, Դատարանը սահմանեց, որ.

Չի կարելի բացառել, որ բժշկական օգնության քաղաքականության բնագավառում իշխանությունների գործողությունները և թերությունները որոշ հանգամանքներում կարող են նրանց պատասխանատու դարձնել 2-րդ հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտավորությունների իմաստով: Այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ պայմանավորվող պետությունը պատշաճ կերպով երաշխավորում է առողջապահության ոլորտի աշխատակիցների բարձր մասնագիտական չափորոշիչները և հիվանդների կյանքի պաշտպանությունը, անընդունելի է, երբ տեղի են ունենում այնպիսի սխալներ, ինչպիսիք են օրինակ առողջապահության ոլորտի մասնագետի սխալ եզրակացությունը, կամ տվյալ հիվանդին բուժելու պարագայում առողջապահության մասնագետների միջև համագործակցության բացակայությունը: Այդ սխալներն ինքնին բավարար են պայմանավորվող պետությանը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հիման վրա կյանքը պաշտպանելու պոզիտիվ պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվության կանչելու համար:

2-րդ հոդվածով նախատեսված պոզիտիվ պարտավորությունները ներառում են հանրային և մասնավոր առողջապահության ոլորտում ինչպես կանխարգելման, այնպես էլ հետաքննության իրականացման պարտավորությունները: *Կալվելլին և Ցիգլիոն ընդդեմ Իտալիայի (Calvelli and Ciglio v Italy)* գործում¹⁵⁸, Դատարանը սահմանեց, որ պետությունները պետք է օրենսդրորեն պարտադրեն (մասնավոր և պետական) հիվանդանոցներին միջոցներ ձեռք առնել հիվանդների կյանքը պաշտպանելու համար և ապահովել, որպեսզի բժշկի հսկողության տակ գտնվող հիվանդի մահվան դեպքերը

¹⁵⁴ Տե՛ս, օրինակ, *Իքս Ասոցիացիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Association X v UK)* գործը, թիվ 7154/75, (1978) 14 DR 31:

¹⁵⁵ Թիվ 25781/94, 10.5.01, (2002) 35 EHRR 731, կետ 219:

¹⁵⁶ Թիվ 65653/01, որոշում 21.3.02:

¹⁵⁷ Թիվ 45305/99, որոշում 4.5.00:

¹⁵⁸ Թիվ 32967/96, 17.1.02:

քննվեն «արդյունավետ, անկախ դատարանի» կողմից, որպեսզի յուրաքանչյուր մեղավոր պատասխանատվության ենթարկվի: Բժշկական անփութության համար քրեական պատասխանատվության նախատեսումը միշտ չէ որ պարտադիր է: Ինչպես *Կալվեյլիի և Տիզլիոյի* գործով հաստատվեց, քաղաքացիական վարույթները կարող են բավարար լինել, եթե դրանք հնարավորություն են տալիս բացահայտել բժշկական անձնակազմի մեղավորությունը և փոխհատուցում, օրինակ վնասների հատուցում, տրամադրել¹⁵⁹: *Կալվեյլիի և Տիզլիոյի* գործում դիմողները, ընդունելով փոխհատուցում իրենց երեխայի մահվան վերաբերյալ քաղաքացիական հայցի մասով հաշտության համաձայնության գալու համար, ինքնակամորեն իրենց զրկեցին բժշկի պատասխանատվության ամբողջ ծավալը բացահայտելու ամենարդյունավետ միջոցից օգտվելու հնարավորությունից:

Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (D v UK) գործում¹⁶⁰, կասկածից վեր էր, որ դիմողի տեղափոխումը Սուրբ Քիթս կարագացներ նրա մահը, քանի որ նա անբուժելի հիվանդ էր ՁԻԱԳ-ով և այնտեղ նրան անհրաժեշտ բժշկական օգնությունը տրամադրել հնարավոր չէր: Դատարանը գտավ, որ 2-րդ հոդվածի ներքո ծագող հարցերն անբաժանելի են այն խնդիրներից, որոնք ծագում են 3-րդ հոդվածի ներքո, որը և Դատարանը խախտված համարեց: *Բարոնեթն ընդդեմ Միացյալ Թագավորության (Barret v UK)* գործում¹⁶¹ Եվրոպական Հանձնաժողովը գտավ, որ ռազմածովային բազայում ալկոհոլի օգտագործման թույլտվությունը, խմիչքի չափից ավելի օգտագործման նկատմամբ հսկողության ապահովման միջոցներ չձեռնարկելու հետ միասին վերցրած, ինչպես նաև բժշկական պատշաճ օգնության ու վերաբերմունքի բացակայությունը, 2-րդ հոդվածի իմաստով խնդիրներ են առաջացնում:

Ստրասբուրգյան մարմինները չեն կողմնորոշվել, թե արդյոք չճնված երեխան պաշտպանվում է 2-րդ հոդվածով¹⁶², նկատի ունենալով Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր վերաբերմունքը: *Բոսոն ընդդեմ Իտալիայի (Boso v Italy)* գործում¹⁶³ Դատարանն անընդունելի հռչակեց դիմողի գանգատը, կապված իր կամքին հակառակ տեղի ունեցած իր կնոջ հղիության կամավոր ընդհատման հետ: Ներպետական համապատասխան օրենսդրության համաձայն, հղիության արհեստական ընդհատումը կարող է կատարվել կնոջ առողջությունը պաշտպանելու համար, ինչը Դատարանը համարեց արդարացի հավասարակշռության ապահովում՝ պտղին պաշտպանելու անհրաժեշտության և կնոջ շահերի միջև:

Նմանապես, 2-րդ ինչպես նաև 3-րդ և 8-րդ հոդվածների կոնտեքստում, ըստ էության որոշում չի կայացվել նաև էֆթանազիայի վերաբերյալ: *Փրիթթին ընդդեմ Միացյալ Թագավորության (Pretty v UK)* գործում¹⁶⁴, դիմողը, ով տառապում էր անբուժելի դեգեներատիվ հիվանդությամբ, պնդում էր, որ առկա է 2-րդ հոդվածի խախտում, քանի որ Գլխավոր դատախազը չէր հաստատել, որ քրեական վարույթ չի հարուցի դիմողի ամուսնու նկատմամբ, եթե նա օժանդակի դիմողի ինքնասպանությանը, և քանի որ անգլիական օրենքները ինքնասպանությանն օժանդակելը քրեական հանցագործություն են որակում: Չնայած, Դատարանը պատրաստ էր ընդունելու, որ 8-րդ հոդվածը կարող է դիտարկվել կյանքի որակի վերաբերյալ հարցերը քննելիս, նա եզրակացրեց, որ «2-րդ հոդվածը, առանց լեզուն աղավաղելու, չի կարող մեկնաբանվել որպես տրամագծորեն հակառակ իրավունքի, այսինքն մահվան իրավունք, սահմանող»¹⁶⁵:

¹⁵⁹ Տե՛ս նույն տեղը կետ 51: Բայց նաև տես դատավորներ Ռոզակիսի, Բոնելլոյի և Ստաժինսկայի խիստ տարբերվող կարծիքները, որոնք պնդում էին, որ «քրեական վարույթները *par excellence* 2-րդ հոդվածի ընթացակարգային պահանջները բավարարող առավել ընդունելի միջոցներն են»:

¹⁶⁰ Թիվ 30240/96, 2.5.97, (1997) 24 EHRR 423:

¹⁶¹ Թիվ 30402/96, որոշում 9.4.97, (1997) 23 EHRR CD 185:

¹⁶² Տե՛ս, օրինակ *Պատոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Paton v UK)* գործը, թիվ 8416/78, որոշում 13.5.80, (1981) 3 EHRR 408,

¹⁶³ Թիվ 50490/99, որոշում 5.9.02:

¹⁶⁴ Թիվ 2346/02, 29.4.02, (2002) 35 EHRR 1, Տես նաև Դ. Մորրիս «Ինքնասպանությանն օժանդակելը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներքո. A Critique [2003] EHRLR 65»:

¹⁶⁵ Տե՛ս նույն տեղը կետ 39: